# Ազգ

Azg

6 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2011 ԵՐԵՔՇԱԲԹԻ 220(4838)

ISSN: 1829-1651


# Կեցցե՞ մարդասպանը

*Քննարկվում է Ռամիլ Սաֆարովին Ադրբեջանին հանձնելու հնարավորությունը*

ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ

Ժամանակ առաջ ադրբեջանական լրատվամիջոցներն անդրադարձել էին Ռամիլ Սաֆարովի ծննդյան տարեդարձին: Հիշեցնենք, որ խոսքը հայ սպային կացնահարած եւ հունգարական արդարադատության կողմից ցմահ բանտարկության դատապարտված ադրբեջանցի հանցագործի մասին է: Նման անձնավորության վերաբերյալ հիմնականում դրական, եթե ավելին չասվի, հրապարակումներն, ինչ խոսք, վկայում են ադրբեջանական հասարակության մեջ դեռեւս գերակա՝ քարեդարյան մտածողության մասին: Այն է՝ «եթե Սաֆարովը հայ է սպանել, ապա մեղավոր չէ»:

Ավելին, թե՛ գործի նախաքննության, թե՛ դատավարության ընթացքում ադրբեջանական կողմը Սաֆարովին պետականորեն ապահովել է պաշտպանությամբ, իսկ հասարակությունը՝ նրան գրեթե հերոսացրել: Ինչպես ասում են՝ «ճաշակին ընկեր չկա»: Հարեւան երկրում նույն բութ համառությամբ «ազնվացնում են» նաեւ Սումգայիթի եւ Բաքվի ջարդարարներին, բոլորին, ում ձեռքը թաթախված է անմեղ հայ մարդկանց արյամբ:

Կարելի է, իհարկե, կրկնել հայ մտավորականությանը յուրահատուկ հումանիզմն ու ասել, որ դրանով իսկ Ադրբեջանը փչացնում է ինքն իրեն: Որ ազգ եւ մարդկային չի կարող լինել այն հասարակությունը, որ արդարացնում է բռնությունը եւ այլն: Բայց, ցավոք, դրանք միայն գեղեցիկ բառեր են: Իրականում թերեւս հարկ է լիովին գիտակցել, որ հայատյացությունն Ադրբեջանում եղել եւ շարունակում է մնալ որպես «ազգային գաղափարախոսություն»՝ իր բոլոր դրսեւորումներով: Դա է այդ պետության բնույթը եւ միաժամանակ՝ գոյության հնարավորությունը. եթե այսօր ադրբեջանական պետության գաղափարախոսությունից հանվի հայատյացությունը, ապա համակարգն ինքնին կփլուզվի:

Դա գիտակցում են առաջին հերթին իշխանությունները: Եվ ամեն ինչ անում են, որ պետական համակարգի «մոնոլիտը» ճեղք չտա: Այս իմաստով բավական ուշագրավ էր ադրբեջանական մամուլում տեղ գտած մի հակիրճ տեղեկատվություն. փոխարտգործնախարար Խալափ Խալափովը վերջերս գտնվել է Հունգարիայում, որտեղ «քննարկվել է Ռամիլ Սաֆարովի էքստրադիցիայի հնարավորության հարցը»:

Լրագրողների համար արված պարզաբանմամբ Խալափովը հաստատել է լուրը եւ ավելացրել, որ «Հունգարիան եւ Ադրբեջանը իրավաբանական օգնության մասին ԵԽ կոնվենցիայի անդամներ են, եւ հարցը բարձրացվելու դեպքում այն կքննարկվի հունգարական կողմից»: Շատ զգուշորեն արված այս մեկնաբանությունից կարելի է ենթադրել, որ, այո, Ադրբեջանը Ռամիլ Սաֆարովին էքստրադիցիայի ենթարկելու հարցով կարող է դիմել Հունգարիային:

Թերեւս, Խալափովն արդեն իսկ, ինչպես ասում են, հետագա քայլերի համար «հող է շոշափել». Հունգարիան ադրբեջանական նավթի սպառողների շարքում բավական ազդեցիկ տեղ ունի: Ավելի վաղ նույնիսկ շրջանառվել է տեղեկատվություն, որ «Ադրբեջանը պատրաստվում է հունգարական նավթավերամշակման ոլորտում խոշոր ներդրումներ անել»:

Իսկ որտեղ ադրբեջանական նավթն ու դրանից ստացվող կապիտալը մուտք ունեն, այնտեղ պարտադիր նաեւ քաղաքական բնույթի խնդիրներ են քննարկվում: Ակնհայտ է, որ Ռամիլ Սաֆարովի խնդիրն Իլհամ Ալիեւի համար «պատվի գործ է», եւ նա ամեն ջանք թափելու է, որ «նա պատիժը կրի հայրենիքում»: Միջազգային պրակտիկայում, ինչ խոսք, լինում են դեպքեր, երբ հանցագործներն էքստրադիցիայի են ենթարկվում եւ շարունակում պատիժը կրել այն երկրում, որի քաղաքացին են:

Տես էջ 8

# ԱՄՆ փոխնախագահ Բայդենը հորդորում է Թուրքիային քայլեր կատարել հայ-թուրք արձանագրությունների հարցում

*Արձանագրություններն անվավեր ճանաչելու դեպքում այդ հորդորներն ուղղվելու էին Հայաստանին՝ դարձնելով նրան ճնշումների թիրախ*

ՀԱԿՈԲ ՉԱՔՐՅԱՆ

Անցյալ շաբաթ Թուրքիա այցելեց ԱՄՆ փոխնախագահ Ջորջ Բայդենը: Մինչ այդ նա եղել էր Բաղդադում, ապա Հյուսիսային Իրաքի «Քուրդիստան» շրջանի մայրաքաղաք Էրբիլում: Փոխնախագահ Բայդենը Անկարայում հանդիպեց Թուրքիայի Ազգային մեծ ժողովի՝ Մեջլիսի նախագահ Ջեմիլ Չիչեքի, այնուհետեւ հանրապետության նախագահ Աբդուլլահ Գյուլի, իսկ շաբաթ օրը Ստամբուլում վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանի հետ:



Ի դեպ, վիրահատությունից հետո Թուրքիայի վարչապետը ապաքինվում էր առանձնատանը: Այդուհանդերձ, շուրջ 45 րոպե նախատեսված Էրդողան-Բայդեն հանդիպումը տեւել է 2 ժամ: Ինչպես Չիչեքի եւ Գյուլի հետ հանդիպումներում, այնպես էլ Էրդողանին այցելելիս, Ջո Բայդենը թուրքական կողմի հետ քննարկել է Իրաքին, PKK-ի դեմ պայքարին, Սիրիային, Իրանին, թուրք-իսրայելական լարվածությանը, Կիպրոսին, Բալկաններին եւ Հայաստան-Թուրքիա հարաբերություններին առնչվող խնդիրներ:

Էրդողան-Բայդեն հանդիպմանը կողմերը գլխավորապես կենտրոնացել են Իրաքի վրա: Ըստ ամերիկյան մի բարձրաստիճան պաշտոնյայի, ԱՄՆ փոխնախագահը, արծարծելով Իրաքում Իրանի Իսլամական Հանրապետության ազդեցության հարցը, ինչպես դեկտեմբերի 4-ին վկայել է «Զամանը», ասել է, որ այդ ազդեցությունը առհասարակ գերագնահատվում է, իրաքցիները չեն կարող հավանություն տալ արտաքին որեւէ միջամտության:

PKK-ի առնչությամբ նա խոսել է քրդական այս կազմակերպության ահաբեկչության դեմ Թուրքիայի պայքարում Վաշինգտոնի վարչակարգի ստանձնած պարտավորությունների մասին: Այնուհետեւ Բայդենը տարածաշրջանում Իրանի ազդեցության հետզհետե թուլացման կարծիք է հայտնել, ասել է, որ փոխարենը այս երկիրը ավելի ու ավելի է մեկուսանում, ընդգծելով Իրանի դեմ գործադրվող ճնշումները շարունակելու անհրաժեշտությունը:

ԱՄՆ փոխնախագահը Սիրիայի առնչությամբ նշել է, որ այստեղ խնդիրը սեփական ժողովրդին սպանող վարչակարգն է, իշխանությունից նախագահ Բաշար Ասադի հեռացման հարցում ձեւավորվում է միջազգային համերաշխություն եւ այս համերաշխությանը առաջնորդում է Թուրքիան:

Տես էջ 4

# 6 հայ մեղադրվում է Ադրբեջանի օգտին լրտեսություն կատարելու մեջ

*Եթե մեղադրանքը հաստատվի, նրանց սպառնում է 10-15 տարվա ազատազրկում*

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ադրբեջանի օգտին լրտեսած, պետական դավաճանության մեջ մեղադրվող երեք եւ նրանց հանցանքի մասին տեղեկացված ու իրավապահ մարմիններին չհայտնած եւս երեք հայերի դատավարությունը մեկնարկեց երեկ Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանում՝ դատավոր Մնացական Մարտիրոսյանի նախագահությամբ:

Կարեն Մեհրաբյանը, Աշոտ Չթրկյանը եւ Ռոմիկ Մաթեւոսյանը մեղադրվում են պետական դավաճանության հատկանիշներով հանցանք գործելու համար, Կարեն Պետրոսյանը, Արթուր եւ Դավիթ Ավետիքյանները՝ հանցագործության մասին իմանալու եւ իրավապահ մարմիններին չհայտնելու հատկանիշներով:

Լրտեսական ցանցի պարագլուխը Կարեն Մեհրաբյանն է: Այս տարվա սկզբներին նա Թուրքիայում հայտնվել է Ադրբեջանի հետախուզական ծառայությունների տեսադաշտում եւ այդ ծառայությունների աշխատակցից ստացել համագործակցության առաջարկ՝ համապատասխան վարձատրության դիմաց: «Հավաքագրվելով հետախուզական ծառայությունների աշխատակից Տիգրան եւ Վարդան անուններով անձնավորություններից, Մեհրաբյանը ստացել է կոնկրետ գրավոր առաջադրանքներ ԼՂՀ ՊԲ վերաբերյալ տեղեկություններ ձեռք բերելու ուղղությամբ, այդ թվում՝ ՊԲ անձնակազմի, զենքի, զինամթերքի եւ զինտեխնիկայի քանակի եւ տեսակի, զորամասերի եւ դրանց հրամանատարական կազմի, պաշտպանական շրջանների, ինժեներական կառույցների, սարքերի եւ սարքավորումների վերաբերյալ», ասված է մեղադրական եզրակացությունում: Վերադառնալով Հայաստան՝ Մեհրաբյանը ծանոթացել է ՀՀ ՊՆ աշխատակիցների եւ ԼՂՀ քաղաքացիների հետ՝ նրանցից ինֆորմացիա ձեռք բերելու նպատակով: Այս տարվա հուլիսի 23-ին նա մեկնել է Թուրքիա՝ հավաքած տեղեկատվությունը գաղտնի ծառայության աշխատակիցներին փոխանցելու, սակայն հայ-վրացական սահմանը հատելիս լրտեսության ձեւով պետական դավաճանության մեջ կասկածանքով ձերբակալվել է:

Ռոմիկ Մաթեւոսյանը 2007-ին Թուրքիայում ծանոթացել է Ադրբեջանի հետախուզական ծառայությունների հետ առնչություն ունեցող Սայիդի եւ Ադրբեջանի հետախուզական ծառայությունների աշխատակից Տիգրանի հետ եւ ստացել առաջադրանք՝ Թուրքիա աշխատելու նպատակով ժամանած ՀՀ քաղաքացիներից գտնել հավաքագրման համար հավանական անձանց: Վերադառնալով Հայաստան՝ Մաթեւոսյանը փորձել է հատկապես զինծառայողներից տեղեկություններ հայթայթել:

Տես էջ 8

# 60 մեքենաներ հատեցին Վերին Լարսի անցակետը

Ինչպես տեղեկացանք տրանսպորտի եւ կապի նախարարությունից, դեկտեմբերի 5-ի դրությամբ Վերին Լարսի անցակետը հատել են հայկական բեռնափոխադրողների 60 բեռնատար մեքենաներ, եւս 20-ը կանցնեն օրվա ընթացքում: Առաջիկա օրերին բոլոր մեքենաները կանցնեն անցակետը:

Ինչպես նշել էինք նախապես, առատ ձյան եւ բքի պատճառով 150-ից ավելի մեքենաներ մնացել էին Վերին Լարսի անցակետում, եւ դեկտեմբերի 3-ին այդ մեքենաների առաջին խմբաքանակը սկսել է տեղաշարժվել:

Վրաստանի ճանապարհային դեպարտամենտից ստացված տեղեկատվության համաձայն՝ դեկտեմբերի 5-ի ժամը 12.00-ի դրությամբ, Մցխեթա-Ստեփանծմինդա-Լարսի ճանապարհի Գուդաուրի (Պոստա) - Կոբի հատվածում երթեւեկությունը արգելված է 30-ից ավելի նստատեղ ունեցող ավտոբուսների համար: Տրեյլերների, կիսատրեյլերների երթեւեկությունը թույլատրվում է հակատեղապտույտային շղթաների առկայության պարագայում՝ քարշային շղթաների օգնությամբ: Այլ մեքենաների համար երթեւեկությունը թույլատրվում է հակատեղապտույտային շղթաների առկայության պարագայում: 2 եւ ավելի տանող կամրջակներով մեքենաների համար երթեւեկությունը բաց է:

Ա. Մ.

# 5 ամիս, 5 շաբաթ, թե 5 օր՝ Սամվել Նիկոյանը սկզբունքային է լինելու

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Ազգային ժողովի նախագահի թափուր տեղի համար երեկ սկսված ԱԺ վերջին քառօրյայում ՀՀԿ խմբակցության ղեկավար Գալուստ Սահակյանն առաջադրեց Սամվել Նիկոյանի թեկնածությունը: Բայց նա, ինչպես նախորդ ԱԺ նախագահների թեկնածուների դեպքում, չմնաց կենտ թեկնածու, այլ ընտրություն բառի իմաստի մեջ փաստորեն տեղավորվեց ակամա, քանի որ նրան որպես այլընտրանք «Ժառանգությունն» անսպասելիորեն առաջարկեց Լարիսա Ալավերդյանի թեկնածությունը: Ու թեեւ հենց առաջին պահից պարզ էր, որ Լարիսա Ալավերդյանը շանս չունի այս մեծամասնության պարագայում, սակայն գոնե խախտվեց ավանդույթը մեկ թեկնածուով «ընտրության», միակ վնասը կրեցին լրագրողները, որոնք կրկնակի չափով ելույթներ եւ մտքերի փոխանակություն լսեցին: Ասենք, որ **Սամվել**



**Նիկոյանն** անմիջապես օգտվեց առաջին իսկ հնարավորությունից եւ դուր եկավ լրագրողներին (չնայած նա ասում էր, որ դա դուր գալու քայլ չէ)՝ խոստանալով ընտրվելու դեպքում առաջին հերթին վերացնել այն արգելքը, որ դրել էր ԱԺ նախկին նախագահ Հովիկ Աբրահամյանը եւ լրագրողներին ԱԺ տարածք մտնել թույլատրում էր միայն նիստերի եւ միջոցառումների օրերին: Նիկոյանն այս եւ մի շարք այլ սրբագրումներ (որոնք անպատճառ լինելու են իր ընտրության դեպքում) խնդրեց չդիտարկել նախորդ ԱԺ նախագահների հետ հակասության դաշտում, այլ որպես բնական զարգացում:

Ս. Նիկոյանն իր ելույթում խոսում էր այն մասին, որ ԱԺ-ում պատգամավոր լինելու 8-9 տարիների պառլամենտական փորձն ու գիտելիքներն առավելագույնս կծառայեցնի գործընկերների եւ հանրության վստահությունը շահելու համար. «Ոչ թե մնացել է ընդամենը 5 ամիս, այլ մի ամբողջ 5 ամիս, իսկ եթե մնացած լիներ 5 շաբաթ, թե 5 օր՝ իմ աշխատանքային սկզբունքները կպատկերացնեի այնպես, ինչպես դրանք կլինեին 5 տարվա դեպքում»:

Տես էջ 2

ԱԶԳ **Ընթացիկ**

# ՀԺԱՄ կուսակցության տասնամյակ
## «Ձեւավորենք միջին խավ»

Տասը տարի առաջ Ազգային ժողովրդավարական միության շարքերից դուրս եկած մի շարք գործիչներ հիմնադրեցին Հայաստանի ժողովրդավարական ազատական միությունը՝ ՀԺԱՄ, որպեսզի «կերտեն ժամանակակից իրավական, սոցիալական պետություն, կառուցեն ազատ եւ արդյունավետ տնտեսություն, կայացնեն քաղաքացիական հասարակություն»:




Դեկտեմբերի 3-ին կառավարության նիստերի դահլիճում ՀԺԱՄ կուսակցությունը գումարել էր իր հոբելյանական համագումարը՝ նվիրված կուսակցության 10-ամյակին: ՀԺԱՄ վարչության նախագահ **Վահրամ Մկրտչյանն** իր ելույթում ընդգծեց, որ «մեր մեջ հոսում է ԱԺՄ-ական քաղաքական արյունը», եւ որեւէ փաստում, որ ՀԺԱՄ-ը հենց ԱԺՄ-ից դուրս եկած գործիչների կուսակցություն է, որեւէ հակասություն փնտրել պետք չէ:

ՀԺԱՄ համագումարին ներկա էր նաեւ Ազգային ժողովրդավարների դաշինք կուսակցության նախագահ Արշակ Սադոյանը, որը նույնպես ժամանակին ԱԺՄ ներկայացուցիչ էր: Համագումարին ներկա էին նաեւ կուսակցությունների ներկայացուցիչներ՝ Արմեն Մարտիրոսյանը՝ «Ժառանգությունից», Արմենական-ՌԱԿ-ից փոխատենապետ Արմեն Մանվելյանը եւ դիվանի անդամ Սիրո Գեւորգյանը, Արամ Հարությունյանը՝ «Ազգային համաձայնություն» կուսակցությունից եւ այլք:

Լրագրողների հետ զրույցում ՀԺԱՄ վարչության նախագահի Վահրամ Մկրտչյանը, անդրադառնալով գալիք խորհրդարանական ընտրություններին, նշեց. «Մենք կոչ ենք անում բոլոր արտախորհրդարանական ուժերին ՝ ձեւավորել դաշինք ու այս ձեւաչափով մասնակցել խորհրդարանական ընտրություններին, քանի որ համագործակցությունների Հայաստանը հնարավորությունների Հայաստան է: Մենք այժմ բանակցություններ ենք վարում նաեւ խորհրդարանական մեկ-երկու կուսակցությունների հետ՝ ընտրություններին միասնաբար ներկայանալու համար»: Մկրտչյանի ասած «խորհրդարանական մեկ-երկու կուսակցություններից» մեկը կարող է լինել «Ժառանգությունը», քանի որ այդ կուսակցության ներկայացուցիչ Արմեն Մարտիրոսյանը ՀԺԱՄ համագումարին ունեցած իր ելույթում ընդգծեց. «Ուրախ եմ, որ ՀԺԱՄ-ը Հայաստանում կուսակցամտեսության ստեղծման կողմնակիցն է: «Ժառանգությունը» նույնպես պայքարել եւ պայքարելու է սրան հասնելու համար»:

Որպես կարգախոս՝ ՀԺԱՄ-ը վաղուց արդեն հայտնի է «Ձեւավորենք միջին խավ» սկզբունքային քաղաքական ուղղվածությամբ: Ու հաշվի առնելով, որ միջին խավի ձեւավորման կարեւորագույն տարրերից է փոքր ու միջին բիզնեսը, ՀԺԱՄ-ը առաջարկում է փոքր բիզնեսը՝ մինչեւ 20 մլն շրջանառությամբ, ազատել հարկերից, միջին բիզնեսի հարկերը կրճատել 30 տոկոսով եւ խոշոր բիզնեսի հարկերը բարձրացնել 30 տոկոսով:

Կուսակցության ծրագրում ուրույն տեղն ունի նաեւ երիտասարդությունը, դահլիճում նստածներից շատերը հենց երիտասարդության ներկայացուցիչներ էին:

Հ. Ա.

# ԲՀԿ նախագահ Գագիկ Ծառուկյանի մամուլի խոսնակ Խաչիկ Գալստյանի պարզաբանումը

Գագիկ Ծառուկյանը վերջին շաբաթվա ընթացքում բացակայում էր հանրապետությունից: Իր կարճատեւ արձակուրդն անց էր կացնում արտերկրում՝ ընտանիքի անդամների հետ:

Թե՛ արձակուրդի օրերին, թե՛ վերադառնալուց հետո նրան մշտապես զեկուցվել է Հայաստանում տեղի ունեցող առավել կարեւոր իրադարձությունների մասին: Գագիկ Ծառուկյանը քաջատեղյակ է կուսակցության անվան հետ կապվող տարբեր առաջարկներին, վերլուծություններին, մեկնաբանություններին ու նաեւ կեղծ լուրերի միտումնավոր տարածման փաստերին: Նա այդ ամենն ընդունել է ի գիտություն:

Հավելեմ նաեւ, որ առաջիկա ամսվա ընթացքում Գագիկ Ծառուկյանի աշխատանքային գրաֆիկը խիստ հագեցած է՝ նախատեսված են բազմաթիվ հանդիպումներ, ընդունելություններ, աշխատանքային խորհրդակցություններ, բարեգործական ակցիաներ:

# 5 ամիս, 5 շաբաթ, թե 5 օր՝ Սամվել Նիկոյանը սկզբունքային է լինելու

*1-ին էջից*

Նա «ԱԺ դերի բարձրացում անչափելի եզրույթից» զերծ մնաց եւ խոստացավ սահմանադրությամբ եւ օրենքներով հստակ ամրագրված լիազորությունների լիարժեք իրագործում: Կառավարություն-ԱԺ փոխհարաբերությունների մասին եւս նա ասելիք ուներ. որպես քաղաքական մեծամասնության ներկայացուցիչ կառավարության հենարանն է որպես ՀՀԿ-ական, սակայն ԱԺ նախագահի ընտրվելուց հետո ԱԺ բնականոն գործունեությունն ապահովելու է ոչ միայն որպես մեծամասնության, այլեւ 2 ընդդիմադիր խմբակցություն եւ անկախ պատգամավորներ ունեցող ԱԺ նախագահ: Կառավարության համար եւս արհեստական խոչընդոտներ չեն ստեղծվի, գործընկերային հարաբերություններ կապահովվեն, որը սակայն չի ենթադրում կառավարության ներկայացրած նախագծերի խորը եւ բովանդակային քննարկումների բացառում: Էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգ ներդնելու առաջարկ եւս արեց, քանի որ բոլոր մյուս ճյուղերում դա արդեն ներդրված է: Նրան ներկայացրած ՀՀԿ-ական **Գագիկ Մինասյանը** հիշեց եւ Ազգային միացյալ կուսակցության անդամ լինելը, եւ ականատես ստեղծելու վրա աշխատելը, եւ ՀՀԿ-ին նվիրված լինելը, եւ ընտանիքի լավ հայր լինելը. « 5 ամիս, 5 շաբաթ, թե 5 օր կաշխատի՝ սկզբունքային է լինելու», համոզված ասաց Գ. Մինասյանը:

**Լարիսա Ալավերդյանը** խոսեց Ազգային ժողովին հասարակության հարգանքը վերադարձնելու, ընդդիմության ու իշխանության թշնամիներ լինելու մտայնությունը վերացնելու անհրաժեշտության, ընդդիմության դերի իրական բարձրացման մասին: Վերջում եզրակացրեց՝ երանելի երկիր է Հայաստանը, բայց երանելի պետություն չէ: Իսկ **Րաֆֆի Հովհաննիսյանը** «Ժառանգության» անկուսակցական անդամին բնորոշելիս ժլատ չէր՝ «ժառանգության» թեկնածուն ունի ազգային, քաղաքացիական եւ բարոյական բոլոր հատկանիշները՝ դառնալու համար ԱԺ նախագահը եւ նրա օրենք որեւէ մեկի արտացոլությունը, քաղաքացիական գիտակցությունը եւ նվիրվածությունը մեր երկրի, մեր պետականության առաջ կասկածի տակ չի առնվելու. «Ազգը, պետականությունը եւ քաղաքացին բարձր են կուսակցականությունից... Այս թեկնածությամբ իշխանական կուսակցությանը «Ժառանգությունն» ասում է, որ չի կարելի ճակատագրապաշտությամբ՝ ֆատալիզմով ապրել, յուրաքանչյուր քաղաքացին կարող է այլընտրանք լինել», հասկացնում էր նա:

Սակայն էս գլխից պարզ էր, որ ընտրվելու է Ս. Նիկոյանը, այլապես դեռ երեկ մանդատային հանձնաժողովի նախագահ Գագիկ Մելիքյանը չէր հայտարարի, որ ԱԺ փոխխոսնակի առաջադրման եւ քվեարկության համար այսօր ԱԺ արտահերթ նիստ է հրավիրվելու: Անգամ Լարիսա Ալավերդյանը եզրափակիչ ելույթում նշեց, որ եթե իրեն չվիճակվի ԱԺ նախագահ դառնալ՝ կուզենար, որ իր բարձրաձայնած խնդիրները իրականություն դառնան ու երկրի նախագահի խոսքից ուղերձ մեջ բերեց՝ հասարակական հարաբերությունների որակը փոխելու վերաբերյալ, կոչ անելով քվեարկել խղճի մտոք:

ԲՀԿ-ից հանդես եկած **Վարդան Բոստանջյանը** ԲՀԿ-ի ձայները հօգուտ Նիկոյանի խոստացավ՝ չնայած Լ. Ալավերդյանի հանդեպ տածած սիրո, ՕԵԿ-ից **Հովհաննես Մարգարյանը** գնահատեց Նիկոյանին՝ «շիրակցուն վայել՝ նամուս, պատիվ եւ թասիբ ունի», եղել է հասարակ եւ տարբեր պաշտոններում գործընկերային պատիվը բարձր է պահել:

ՀՅԴ-ն որեւէ կարծիք չհայտնեց:

ԱԺ նախագահի փակ գաղտնի քվեարկությունը տեղի կունենա այսօր, ժամը 12:30-ին, իսկ ահա այդ ընտրությունից հետո միայն, երբ ԱԺ փոխխոսնակի տեղը կազատվի, ՀՀԿ-ն կառաջադրի Էդուարդ Շարմազանովի թեկնածությունը, որն, ի դեպ, տեղի կունենա այսօր՝ ժամը 18:30-ին հրավիրվելիք արտահերթ նիստի ժամանակ, քանի որ հերթական քառօրյայում այդպիսի հարց ընդգրկված չէր:

ԱՆԹԻԼԻԱՍ

# «Ֆրանսիայի ԱԳ նախարարի հայտարարությունը հակասում է Ցեղասպանության մասին Ֆրանսիայի դիրքորոշմանը»

Դեկտեմբերի 4-ին Մեծի տանն Կիլիկիո կաթողիկոս Արամ Առաջինը Անթիլիասում ընդունել է տարածաշրջան այցելած Ֆրանսիայի վարչապետի ներկայացուցիչ Ադրիեն Կուբեյրոյին: Հանդիպման ընթացքում Արամ կաթողիկոսը հատուկ կարեւորությամբ անդրադարձել է Ֆրանսիայի ԱԳ նախարար Ալեն Ժյուպեի հայտնի հայտարարությանը, որով Ժյուպեն նշել էր, թե «Փարիզը պատրաստ է հյուրընկալել հայերի ու թուրքերի հանձնախմբերին, որոնք կքննարկեն 1915-ի ցավալի իրադարձությունները»: Ընդգծելով, որ Ֆրանսիայի առաջին դիվանագետի այս հայտարարությունը խիստ վրդովմունք է առաջացրել հայ ժողովրդի շրջանում, **Արամ Առաջինը** ասել է. «Այդ ինչպե՞ս է լինում, որ Ֆրանսիայի խորհրդարանը, այդ երկրի երեք նախագահները ճանաչում ու դատապարտում են Հայոց ցեղասպանությունը, սակայն նույն երկրի նախարարը բոլորովին այլ հայտարարությամբ է հանդես գալիս»: Այս կապակցությամբ վարչապետի ներկայացուցիչը նկատել է. «Ճիշտ է, Ֆրանսիան ճանաչել է Հայոց ցեղասպանությունը, սակայն պետք է անտեսել Թուրքիայի դերը տարածաշրջանում ու նրա հարաբերությունները Եվրոպայի հետ»:

Արամ Առաջինը Ադրիեն Կուբեյրոյի հետ քննարկել է նաեւ իրավիճակը Միջին Արեւելքում: Մեծի տանն Կիլիկիո կաթողիկոսը Ֆրանսիայի վարչապետի ներկայացուցչին ներկայացրել է սեփական տեսակետները, մասնավորապես տարածաշրջանի քրիստոնեական համայնքներին նեցված նոր մարտահրավերների հետ կապված:

Հ. Ա.

# ԱԱԽ քարտուղար Արթուր Բաղդասարյանը մեկնում է Ֆրանսիա

ԱԱԽ քարտուղար Արթուր Բաղդասարյանը դեկտեմբերի 6-8-ը աշխատանքային այցով կլինի Ֆրանսիայի Հանրապետությունում:

Այցի շրջանակներում Արթուր Բաղդասարյանը հանդիպումներ կունենա Ֆրանսիայի Ազգային անվտանգության եւ պաշտպանության գլխավոր քարտուղար Ֆրանսիս Դելոնի, Մարսելի քաղաքապետ, սենատոր Ժան-Կլոդ Գոդենի, «Շուման» հիմնադրամի նախագահ Ժան Դոմինիկ Ջուլիանիի, Արտերկրում ֆրանսիական կրթական հաստատությունների գործակալության գլխավոր տնօրեն Անն Մարի Դեկոտի եւ բարձրաստիճան մի շարք այլ պաշտոնյաների հետ:

ԱԱԽ քարտուղարը կմասնակցի նաեւ Մարսել քաղաքում կազմակերպվելիք Եվրոպական ժողովրդական կուսակցության 20-րդ համագումարին: Համագումարի շրջանակներում տեղի կունենա Արթուր Բաղդասարյանի հանդիպումը Եվրոպական ժողովրդական կուսակցության նախագահ Ուիլֆրեդ Մարթենզի եւ ԵՄ անդամ երկրների քաղաքական կառույցների ղեկավարների հետ:

# Բարեկամության շքանշան Տիգրան Լիլոյանին

Ռուսաստանի Դաշնության նախագահ Դմիտրի Մեդվեդեւը հրամանագիր է ստորագրել Հայաստանում ԻՏԱՌ-ՏԱՍՍ գործակալության ներկայացուցչության ղեկավար Տիգրան Լիլոյանին «Բարեկամության շքանշանով» պարգեւատրելու մասին: Տիգրան Լիլոյանը այդ բարձրագույն պարգեւին է արժանացել տեղեկատվության ասպարեզում հայ-ռուսական համագործակցությանը մատուցած մեծ



նպաստի համար: «Ազգը» միանում եւ շնորհավորում է գործընկերոջը նման բարձր պարգեւի արժանանալու համար:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան Ի տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 375010 Հանրապետութեան 47
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221
Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960
Լրագրողների սենեակ / հեռ 581841
Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483
***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն*** / հեռ 529353
Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:
"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

# Կոնյակ եւ դեղեր՝ հայկական արտահանման առաջնահերթությունները

*Ի՞նչ է ծրագրվում իրականացնել այստեղ մինչեւ 2020-ը*



«Արտահանման վրա հիմնված արդյունաբերության զարգացման ռազմավարությունը», որին մի քանի անգամ անդրադարձել ենք մեր թերթում, կիրակի օրը ներկայացվեց ՀՀԿ սեմինարի ժամանակ: Հիշեցնենք, որ անկախության 20 տարիների ընթացքում այն արդյունաբերության զարգացմանն ուղղված առաջին համալիր ծրագիրն է: Ըստ այդ ռազմավարության, արդյունաբերության 11 ճյուղերի կառավարությունը խոստանում է պետական աջակցություն ցուցաբերել, ներկայացնելով աջակցության ձեւերը, ժամկետները, աղբյուրները եւ այլն:

Առաջին փուլի համար ընտրված են 3 ոլորտներ՝ կոնյակագործությունը, դեղագործությունը եւ ճշգրիտ ճարտարագիտությունը: Վերջինիս մասին արդեն գրել ենք: Ի՞նչ միջոցառումներ են նախատեսվում իրականացնել մյուս երկու՝ կոնյակագործության եւ դեղագործության ոլորտներում առաջիկա 9 տարիներին՝ 2012-2020-ին:

Կոնյակագործությունը Հայաստանի տնտեսության առաջատար ճյուղերից մեկն է եղել եւ մնում: 2010-ին Հայաստանում արտադրված 107 մլն դոլարի կոնյակից արտահանվել է ավելի քան 95 մլն դոլարի կոնյակ, որի հիմնական մասը՝ 80 տոկոսը, Ռուսաստան: Կոնյակագործության մեջ ընդգրկված է շուրջ 1800 մարդ, կոնյակագործության համար խաղողագործության մեջ՝ 8-10 հազար, իսկ խաղողի այգետարածքները 15 հազար հա են:

Ոլորտի զարգացման ծրագրի իրականացմամբ ակնկալվում է, որ 2015-ին վերոնշյալ ցուցանիշները հետեւյալ կերպ կփոխվեն՝ արտադրությունը կկազմի 160-195 մլն դոլար, արտահանումը 150-180 մլն դոլար, արտահանումը Ռուսաստան՝ 70 տոկոսը, որին պետք է ավելանա արտահանումը Չինաստան, կազմելով 5-7 տոկոս: Զբաղվածների թիվը կոնյակագործության պետք է հասնի 2600-3100-ի, խաղողագործների թիվը՝ 12-13,5 հազարի, խաղողի այգետարածքները՝ 26 հազար հա-ի:

2020-ին ծրագրվում է արտադրությունը հասցնել 270-320 մլն դոլարի, արտահանումը՝ 250-300 մլն դոլար, որից Ռուսաստան՝ 65 տոկոս, Չինաստան՝ 8-10 տոկոս, զբաղվածների թիվը՝ 4000-4700-ի, խաղողագործների թիվը՝ 16-18 հազարի, խաղողի այգետարածքները՝ 33 հազար հա-ի:

Այս ցուցանիշներին հասնելու համար որոշակի քայլեր են նախատեսվում կոնյակագործության ամբողջ շղթայում եւ հատկապես նրա ամենաթույլ օղակներում՝ որակի վերահսկման եւ վաճառքի հարցերում: Մասնավորապես, որակի ապահովման ուղղությամբ ժամանակակից լաբորատորիայի հիմնում, որը թույլ կտա ստուգել կոնյակի իսկությունը, իսկության հավաստագրման ինստիտուտի լիարժեք գործունեություն, որակի տարբերանշանների շնորհում եւ այլն:

Ինչ վերաբերում է վաճառքին, ապա բացի առկա շուկաներից՝ Ռուսաստանից եւ ԱՊՀ երկրներից, նոր շուկաներ մուտք գործելու խնդիր է դրվում: Առաջին փուլում դա կլինի Չինաստանը, երկրորդ փուլում՝ Արեւելյան Ասիայի, Արեւելյան Եվրոպայի եւ այլ երկրներ: Դրա համար արտադրողներին կտրամադրվի այդ շուկաների մասին տեղեկատվություն, կստեղծվի «Հայկական կոնյակ» բրենդը, կկազմակերպվեն ցուցահանդեսներ, կբացվեն առեւտրային ներկայացուցչություններ եւ այլն:

2012-2015-ին, այս նպատակներին հասնելու համար նախատեսվում է մոտ 5,6 մլն դոլար ֆինանսավորում տրամադրել, որի 38 տոկոսը պետական ֆինանսավորումն է լինելու: Այդ նույն երեք տարիների ընթացքում միասին վերցրած, ակնկալվում է ունենալ գրեթե 700 մլն դոլար արտահանված արտադրանք եւ մոտ 35 մլն դոլար հարկային մուտքեր:

Դեղագործության ցուցանիշները, համեմատած կոնյակագործության հետ, ավելի համեստ են, բայց այս ոլորտը նույնպես համարվում է դինամիկ զարգացող եւ հեռանկարային: 2010-ի տվյալներով՝ Հայաստանում դեղարտադրության մեջ ներգրավված են 550 աշխատող, արտադրության ծավալները՝ 8,8 մլն դոլար, արտահանումը՝ 5 մլն դոլար: Դեղերի արտահանման ծավալներով մեր երկիրը համադրելի է Նիկարագուայի, Ֆիջիի եւ Նիգերիայի հետ:

2015-ին արտադրության ծավալներն այստեղ նախատեսվում է հասցնել 30-35 մլն դոլարի, արտահանումը՝ 20-25 մլն դոլարի, որից 10-15 մլն դոլարը անդրազգային ընկերությունների պատվերները պետք է լինեն, իսկ աշխատողների թվաքանակը՝ 900-950-ի: Արտահանման ծավալներով այդ ժամանակ համադրելի պետք է լինենք Էստոնիայի, Ֆիլիպինների, Սաուդյան Արաբիայի հետ:

2020-ին արտադրությունը ծրագրվում է հասցնել 95-135 մլն դոլարի, արտահանումը՝ 75-115 մլն դոլարի, որից 50-90 մլն դոլարը անդրազգային ընկերությունների պատվերներ: Արտահանման ծավալներով համադրելի պետք է դառնանք Լյուքսեմբուրգի, Բելառուսի, Մարոկկոյի, Չիլիի, Ուրուգվայի հետ: Ինչպես երեւում է, ռազմավարության մեջ կարեւոր դեր է հատկացվում անդրազգային ընկերությունների պատվերներին, որի ձախողման դեպքում, ինչպես նշվում է ռազմավարության մեջ, արտահանման ցուցանիշները կկազմեն 2015-ի նախատեսվածի 40-50 տոկոսը, իսկ 2020-ին՝ 20-35 տոկոսը:

Եթե ներկայումս հայկական դեղագործական արտադրանքն արտահանվում է հիմնականում ԱՊՀ երկրներ (Վրաստան, Ռուսաստան եւ այլն), ապա որակի եվրոպական ստանդարտների տեղայնացումից, հավաստագրման եւ վերահսկման մարմնի ձեւավորումից եւ միջազգային ճանաչումից հետո հնարավոր կլինի արտահանել նաեւ այլ երկրներ: Տեղական հումքային բազայի ստեղծում, մասնագիտական կրթության բարելավում, արտահանման ֆինանսավորման մեխանիզմի ստեղծում, վենչուրային ֆինանսավորում նորարարական նախագծերին, անդրազգային ընկերությունների կողմից դեղերի արտադրությունը Հայաստանում կազմակերպելու խթանում, ներքին եւ արտաքին շուկաներում հայկական դեղերի վաճառքի խթանում եւ մի շարք այլ քայլեր, որոնք կառավարության ներկայացրած ռազմավարության համաձայն, կնպաստեն նաեւ դեղագործության զարգացմանը:

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

# Երթուղագծերից դուրս է բերվել 471 միկրոավտոբուս. պատճառն անբավարար արտաքին տեսքն էր

Հասարակական տրանսպորտային միջոցների չնախատեսված կանգառներում կայանման վերաբերյալ կազմվել է 156 վարչական արձանագրություն, իսկ մերձքաղաքային տրանսպորտի միջոցների մասով արձանագրվել է խախտման 20 դեպք: Այս մասին երեկ քաղաքապետարանում աշխատանքային խորհրդակցության ժամանակ Տարոն Մարգարյանին զեկուցել է քաղաքապետարանի տրանսպորտի վարչության պետը: Նա նշել է, որ ճանապարհային ոստիկանության հետ համատեղ իրականացվող ստուգայցերը շարունակական են լինելու եւ նպատակ ունեն մերձքաղաքային ավտոտրանսպորտային միջոցները, մայրաքաղաքում հասարակական տրանսպորտի աշխատանքը վերահսկել եւ կանոնակարգել: Արձանագրվել է վարորդների ծխելու 31 դեպք, սանիտարական անբավարար արտաքին տեսքի համար էլ ժամանակավորապես երթուղագծերից դուրս է բերվել 471 միկրոավտոբուս: Հ. Հ.




# Հայտնի են դարձել ArmNet Awards 2011 մրցույթի հաղթողները

*Գլխավոր մրցանակին արժանացել է http://parliamentmonitoring.am կայքը*

**Դեկտեմբերի 3-ի ուշ երեկոյան ավարտվեց ArmNet Awards 2011 մրցույթը, որը եզրափակվեց մրցանակաբաշխության պաշտոնական արարողությամբ: ArmNet Awards ամենամյա մրցույթը, որն այս տարի անց է կացվում արդեն երկրորդ անգամ, կոչված է գնահատելու տեխնոլոգիաների հանրայնացման հետ մեկտեղ՝ ինտերնետի հայկական սեգմենտում կատարված առաջընթացը, խրախուսելու հայկական կայքերի բովանդակային զարգացումը եւ նպաստելու նորաստեղծ կայքերի առաջխաղացմանը:**

**Մրցույթը կազմակերպվել է SPMS ընկերության, Orange Armenia ընկերության եւ Հայաստանի ինտերնետ հանրություն հասարակական կազմակերպության կողմից:**

**Միջազգային ժյուրին ընտրեց տարվա լավագույն կայքերը 6 անվանակարգերում, ինչպես նաեւ երկու հատուկ մրցանակ հանձնվեց ժյուրիի կողմից կայքի հանրային կարեւորության եւ ազդեցության համար:**

**«Դիզայն եւ հարմարավետություն» անվանակարգում լավագույնը ճանաչվեց http://armenianmonuments.org կայքը՝ հետեւում թողնելով http://daronmouradian.com, http://vtv.am եւ http://tashirpizza.am կայքերին: Ժյուրին առանձնապես գնահատեց կայքի ինտերֆեյսը, բովանդակության եւ ձեւի համահունչ կապը:**

**«Տարվա առաջընթաց» անվանակարգին արժանացավ http://parliamentmonitoring.am կայքը: Հաղթանակին հավասարաչափ հավակնում էին նաեւ http://1in.am, http://civilnet.tv, http://ecolur.org կայքերը:**

**«Լավագույն նորարարություն» անվանակարգում լավագույնը ճանաչվեց http://annoisy.org կայքն իր յուրահատուկ լուծումներով: Հաղթանակին հավակնում էին նաեւ http://publicdata.am, http://parliamentmonitoring.am եւ http://givemeinfo.am կայքերը:**

**«Լավագույն տեխնիկական կատարում» անվանակարգում հաղթողը դարձավ http://yerevanguide.am կայքը՝ հավաքելով ավելի շատ ձայներ, քան http://webtv.am, http://eventot.com եւ http://yerevan.am կայքերը:**

**«Լավագույն բովանդակություն» անվանակարգում մրցանակը հանձնվեց http://genocide-museum.am կայքին: Անվանակարգում առաջադրվել էին նաեւ http://ecolur.org, http://chtesutyun.arnet.am եւ http://hra.am կայքերը:**

**Orange-ի հատուկ մրցանակը, որը նախատեսված է կայքի լավագույն մոբայլ տարբերակի համար, այս տարի նույնպես տրվեց ինֆորմացիոն կայքի: Այն Orange-ի ղեկավարությունը ժյուրիի առաջարկով հանձնեց m.lragir.am-ին: Այս անվանակարգում մասնակիցները թվով շատ չէին, սակայն արդեն մի քանի անգամ ավելին էին, քան նախորդ տարի, ինչը խոսում է այս ուղղությամբ նկատելի զարգացումների մասին:**

**«Համաշխարհային միտումները ցույց են տալիս, որ ավելի ու ավելի մեծ թվով օգտագործողներ են ինտերնետից օգտվում իրենց բջջային հեռախոսների միջոցով, եւ Հայաստանը բացառություն չէ: Այս մրցանակով ոչ միայն ցանկանում ենք պարգեւատրել լավ կառուցված մոբայլ ադապտացիայի համար, այլ նաեւ խրախուսել մյուս կայքերին նույնպես զարգացնել իրենց կայքերն այս ուղղությամբ», ասաց Orange-ի գլխավոր տնօրեն Բրունո Դյուբուան:**

**Այս տարի առաջին անգամ հանձնվեց նաեւ մրցանակ «Ժողովրդական ընտրություն» անվանակարգում: SMS քվեարկությունը, որի միջոցով էլ ընտրվել է «ամենաժողովրդական» կայքը, տեւեց նոյեմբերի 28-ից մինչեւ դեկտեմբերի 3-ը: Քվեարկությանը մասնակցեցին 8224 բաժանորդներ, որոնցից 1259-ի ձայներն ուղղված էին http://newsinfo.am լրատվական կայքին:**

**ArmNet Awards 2011 գլխավոր մրցանակին արժանացավ http://parliamentmonitoring.am կայքը, որը տրվում է ժյուրիի կողմից բոլոր անվանակարգերում առավելագույն թվով միավորներ հավաքած կայքին: Կայքը համաչափորեն զարգացած է բոլոր առումներով. թե տեխնիկական կատարման, թե բովանդակային, թե դիզայնի առումով եւ գնահատվեց ժյուրիի բոլոր անդամների կողմից:**

**«Ինչպես անցյալ տարի, այս տարի նույնպես ArmNet մրցանակաբաշխությունը թույլ տվեց բացահայտել բազմաթիվ հետաքրքիր կայքեր: Բոլորին խորհուրդ եմ տալիս այցելել այն կայքերը, որոնք հայտնվել էին հավակնորդների ցանկում, քանի որ մեր երկար ու դժվար աշխատանքի արդյունքում, իսկ մենք մեկ առ մեկ դիտարկել ենք 569 կայք, իհրավի հետաքրքիր էջեր են գտնվել, որոնք լավագույնս նկարագրում են հայկական ինտերնետի բովանդակային զարգացումը», ասաց ժյուրիի նախագահ Սամվել Մարտիրոսյանը:**

**Մրցանակաբաշխության ավարտին ժյուրին հատուկ մրցանակներ հանձնեց http://granish.org եւ http://publicdata.am կայքերին, որոնցից յուրաքանչյուրն առանձնահատուկ դերակատարում ունի իր ոլորտում:**

# Էրդողանի ներողությունը բացում է Պանդորայի արկղը

**ԵՐՎԱՆԴ ԱԶԱՏՅԱՆ**

Ըստ երեւույթին, կարելի է նշել, որ Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանը հմուտ քաղաքագետ է, եւ միջազգային ասպարեզում Թուրքիայի վարկանիշի բարձրացումը մեծ մասամբ անձամբ նրան եւ որոշ առումով էլ նրա կուսակցությանը պետք է վերագրել: Բայց իր երկրի պատմությունը չի համագործակցում իր հետ: Թուրքիան այնքան շատ ներքին կամ այսպես կոչված «ընտանեկան» գաղտնիքներ ունի, որ դրանց բացահայտումն ամեն րոպե կարող է վտանգել երկրի եւ նրա ղեկավարների հեղինակությանը:

Նման դեպք տեղի ունեցավ, երբ վարչապետը վերջերս խիստ հաշվարկված քայլ կատարելով՝ ներողություն խնդրեց 1937-38 թթ. Դերսիմի իրադարձությունների համար, որոնց ընթացքում ավելի քան 100 հազար ալավիներ եւ քրդեր կոտորվեցին երկրում՝ զինված ների հեղինակ Ժողովրդա-հանրապետական կուսակցությունը եւ նրա առաջնորդը Թունջելիից (Դերսիմի այժմյան անվանումը)»:

Նա ավելի առաջ գնալով, հայտարարեց. «Ե՞ս պետք է ներողություն խնդրեմ, թե՞ դու (Քեմալ Քըլըչդարօղլու): Այդուհանդերձ, եթե պետք լինի պետության անունից ներողություն խնդրել, եւ առիթ լինի դրա համար, ապա ես ներողություն կխնդրեմ ու խնդրում եմ: Բայց եթե կա մեկը, որ պետք է ներողություն խնդրի Ժողովրդա-հանրապետական կուսակցության անունից, ապա դուք պետք է լինեք, քանի որ դուք Դերսիմից եք: Ասում էիք, չէ՞, որ հպարտ եք դերսիմցի լինելու համար: Այժմ ժամանակն է փրկելու ձեր հպատությունը»:

Էրդողանը, որ սիրում է ուրիշներից՝ Իսրայելից, Գերմանիայից եւ Հայաստանից ներողություն, ինչը համահունչ կլիներ սփյուռքահայերի մտածելակերպին, Էրդողանը նյարդայնացած հակադարձեց. «Ամոթ քեզ, ինչպե՞ս ես համարձակվում նույնացնել ինձ սփյուռքահայերի հետ»:

Ըստ Քըլըչդարօղլուի, Դերսիմի կոտորածների համար ներողություն խնդրելը բավական չէ: Պետք է նաեւ բացել այդ միջադեպերի վերաբերյալ բոլոր արխիվները, ինչը կարող է մեկ ուրիշ «Պանդորայի արկղ» դառնալ, քանի որ դրանցով կբացահայտվեն իրադարձությունները հրահրող զինվորական առաջնորդների անունները եւ տեղի բնակչությունը միատարր դարձնելու Աթաթուրքի մտադրությունները: Զինվորականների պահանջներից մեկն այդ ժամանակ ալավի առաջնորդներից պահանջելն էր, որ իրենց հանձնեն Դերսիմում ապաստան գտած 25 հազար հայերին հատուցում տրվի իրենց կորուստների դիմաց:

Թուրքիայի «Մարդու իրավունքների կոմիտեն» հաղորդագրություն է հրապարակել, որով առաջարկում է կազմել «Ճշմարտության բացահայտման կոմիտե»՝ քննարկելու համար Հայոց ցեղասպանության եւ քուրդ բնակչության բռնի ձուլման երեւույթները:

Բայց ամենակտրուկ եւ սուր հարցադրումները «Սաբահ» թերթում սյունակագիր Էնգին Արդըչն է առաջ քաշում՝ տեղեկացնելով, որ իրավաբաններն արդեն իսկ Դերսիմի հարցով զբաղվում են եւ ծրագրում են դատի տալ թուրքական պետությանը:

Հայկական հարցին անդրադառնալով՝ նա նշում է, որ այդտեղ «լռության դավադրություն» գոյություն ունի, հատկապես հարուստների շրջանում: «Եթե

ապստամբությունը ճնշելու անվան տակ:

Էրդողանի հաշվարկված այս քաղաքական քայլը տեղիք տվեց անհաշիվ հակազդեցությունների, որոնք շարունակում են կուտակվել: Կեղծավորություն եւ դեմագոգիա դրսեւորելու ասպարեզում նա առաջնակարգ վարպետ է, որ կարող է որեւէ բան եւ ամեն բան օգտագործել առաջ տանելու իր քաղաքական օրակարգի հարցերը:

Բայց կարծես այս անգամ «բումերանգի էֆեկտը» կամ հակազդեցությունն այնքան ուժեղ է, որ ակնկալված քաղաքական դիվիդենտների փոխարեն Թուրքիան կարող է մեծապես տուժել:

Ներկայումս Թուրքիայում դաժան մրցակցություն է ծավալված Էրդողանի «Արդարություն եւ բարգավաճում» եւ գլխավոր ընդդիմադիր Ժողովրդա-հանրապետական կուսակցությունների միջեւ: Երկուսն էլ փորձում են իրար հիմնովին ոչնչացնել:

Իշխող «Արդարություն եւ բարգավաճում» կուսակցությունը մեծ հաջողությամբ կարողացավ մեկուսացնել ուժեղ ընդդիմադիր, «Հանրապետական» կուսակցության առաջնորդ Դենիզ Բայկալին, վերջինիս եւ իր նախկին կուսակիցներից մեկի վերաբերյալ սեռային բնույթի տեսաժապավեն հրապարակելով: Նրան փոխարինելու եկավ համեմատաբար ավելի մեղմ կամ չափավոր ծայրահեղական թվացող Քեմալ Քըլըչդարօղլուն, չնայած այժմ նա էլ է կրակ թափում Էրդողանի, նրա կուսակցության եւ վարչակազմի գլխին:

Հակադարձ մեղադրանքները մի կուսակցությունից մյուսին են հասցեագրվում:

Էրդողանը միաժամանակ մի քանի հասցեատիրոջ էր ուղղում իր խոսքը, երբ, անդրադառնալով Դերսիմի իրադարձություններին, ասաց. «Դերսիմը մեր պատմության ամենացավալի եւ ամենաողբերգական իրադարձություններից մեկն է: Դա մի աղետ էր, որին այժմ անդրադառնալու խիզախությունը պետք է ունենանք: Այդ կոտորածների հետ առերեսվողը իշխող «Արդարություն եւ բարգավաճում» կուսակցությունը չէ, որ պետք է լինի, այլ այդ արյունոտ իրադարձությունթյուն պահանջել, այս անգամ ինքն է խրվել ներողության խաղի մեջ: Այդ քայլի բազմաթիվ հասցեատերերից մեկը Աթաթուրքի հիմնած ընդդիմադիր Ժողովրդա-հանրապետական կուսակցությունն է, որին այժմ գլխավորում է Քըլըչդարօղլուն: Բայց դրա հետեւում թաքնված հասցեատերը, անշուշտ, Աթաթուրքն է, որի ժառանգությունը քարուքանդ է լինում, աղյուս առ աղյուս, իշխող իսլամիստական կուսակցության կողմից:

«Էրգենեքոնի» հետաքննությունները, բանակային պատասխանատու անձանց ձերբակալությունները, եւ զինվորական հաստատությունների դեմ մղված պայքարը անբաժանելի մասնիկներն են այդ հետեւողական քաղաքականության:

Հասցեատերերից կամ թիրախներից մեկն էլ, անկասկած, Դերսիմի ալավի բնակչությունն է, որի քվեները վարչապետը փորձում է սիրաշահել:

Այս բոլորն, անշուշտ, ներքին շուկայի համար է: Բայց Էրդողանը նաեւ միջազգային հանրությանն էր հասցեագրում իր ելույթը, մատնացուցելով, որ Թուրքիան քայլ առ քայլ փորձում է առերեսվել իր անցյալի արյունոտ պատմության հետ: Դրանով նա դիվիդենտներ էր ցանկանում ձեռք բերել Եվրոմիությանը անդամակցելու առնչությամբ:

Որոշ շրջանակներ Հայաստանում թե սփյուռքում վաղահաս հույսեր սկսեցին փայփայել, որ ներողությունների այս հերթը հասնի նաեւ Հայոց ցեղասպանության համար ներողություն խնդրելուն: Բայց Էրդողանն իր ընդդիմադիր կուսակցության հետ պայքարն այնպիսի ձեւով առաջ տարավ, որ ընդմիշտ փակեց նման հնարավորությունը: Դերսիմի իրադարձությունների վերաբերյալ իր ելույթը նա սկսեց այսպես. «Դերսիմը մեր պատմության ամենացավալի եւ ամենաողբերգական իրադարձություններից է» նախադասությամբ, որը նշանակում է, թե դրանից ավելի ողբերգական իրադարձություն չկա: Ավելին, երբ Քըլըչդարօղլուն ակնարկեց, որ Էրդողանի քաղաքականությունը կարող է առաջնորդել նրան Հայոց ցեղասպանության համար էլ ներողություն խնդրերին, որոնք փրկվել էին ցեղասպանությունից: Մյուս բացահայտումների շարքին կլինեն Աթաթուրքի որդեգրած դստեր եւ Թուրքիայի առաջին զինվորական օդաչուի՝ Սաբիհա Գյոքչենի հանցագործությունները: Դերսիմի հայերը կրկնակի վիրավորված էին, որ իրենց «քույրը» միացել էր թուրքական զինվորականությանը եւ ռմբակոծում էր իրենց: Ի հեճուկս թուրք ռասիստների, Հրանտ Դինքը հայտնաբերել էր եւ հրապարակել այն փաստը, որ Սաբիհա Գյոքչենը հայ որբուհի էր:

Թուրք զինվորականությունը տարածքը ռմբակոծելուց եւ մարդկանց ունեցվածքներն առգրավելուց հետո Դերսիմից դուրս քշեց ողջ մնացածներին դեպի հանրապետության այլ շրջաններ՝ նրանց ձուլման ենթարկելու նպատակով:

Այնուամենայնիվ, հակառակ Էրդողանի զգուշավորությանը, մամուլի մեկնաբանությունների մի ամբողջ խմբաքանակ նրանից պահանջում է ներողություն խնդրել նաեւ Հայոց ցեղասպանության համար:

«Ռադիկալ» թերթի թղթակից Էրեն Քեսքինն, օրինակ, ասում է, որ որեւէ մեկից առաջ Թուրքիան ներողություն պետք է խնդրի հայերից՝ նրանց 1915-ին պատուհասած ցեղասպանության համար: Նա նաեւ ակադեմիական շրջանակներում հետազոտություններ կատարելով մի շարք այլ իրադարձություններ է նշում, որոնց համար Թուրքիան պարտավոր է ներողություն խնդրել: Դոկտ. Մուրադ Փաքերն, օրինակ, նշել է Դիարբեքիրի բանտում 5 հազար կալանավորվածների կտտանքների ենթարկելու պարագան: Մեկ ուրիշ պրոֆեսոր հիշեցրել է Մարաշի եւ Չորումի կոտորածների դեպքերը: Իսկ Ռիֆաթ Բալին առաջ է քաշել Թրակիայի հրեաների սնանկացման (ինչքերի առգրավման հետեւանքով՝ 1934 թվին) եւ ոչ մահմեդական քաղաքացիներից 1941-ին ունեւորության հարկ գանձելու պարագաները: Վերջինի հետեւանքով մեծ թվով մարդիկ մահացան հարկադիր աշխատանքային գաղութներում: Ինչ վերաբերում է հայերին, Քեսքինը պնդում է, որ սոսկ ներողությունը բավական չէ, հայերին նաեւ պետք է փոխնրանց անցյալը փորփրենք, կտեսնենք, որ նրանք են սպանել հայերին եւ տիրել նրանց ունեցվածքին: Եթե գործը բացվի, դրամական փոխհատուցման հարց է առաջ գալու, եւ նրանք մտածում են, թե ինչպե՞ս կարող է կառավարությունը փոխհատուցել հայերին այն բանից հետո, երբ արդեն 200 միլիարդ դոլար է ծախսել՝ ճնշելու քրդական ապստամբությունը: Բայց կա նաեւ մի հիմնական հարց. արդյոք կառավարությունը ունի՞ հետեւողական լինելու սկզբունքը: Եթե «այո», ապա ինչո՞ւ դուրս թողնել 1915-ը, իսկ եթե «ոչ», ապա ինչո՞ւ ներողություն խնդրել Դերսիմի իրադարձությունների համար»:

Այս հարցերը մեզ առաջնորդում են դեպի այն փաստը, որ երկիրը եվրոպականացնելու քողի ներքո Մուսթաֆա Քեմալ Աթաթուրքը իրականացրեց նացիստների ռասիստական քաղաքականությունը, ինչպես բնութագրում է վերոնշյալ հեղինակը: Այդ պետական քաղաքականությունը կենսագործելու համար նա համագործակցեց բոլոր կառավարական պաշտոնյաների հետ, որոնք իրագործել էին Հայոց ցեղասպանության իթթիհատականների ծրագիրը:

Սուլթան Աբդուլ Համիդից մինչեւ Թալեաթ ցեղասպանական այդ ծրագրերը իրականացվեցին անողոքաբար, առանց խղճի խայթի որեւէ նշույլի: Աթաթուրքը շարունակեց գործը մեծ պետությունների քթի տակ, որոնք հիմա էլ պնդում են, որ Թուրքիան «մեր վստահելի գործընկերն է», անկախ այն հանգամանքից, թե ինչքան արյունոտ են այդ «գործընկերոջ» ձեռքերը:

Ցեղասպանության հարցը թեժ թեմա է դարձել թուրք հասարակության շրջանում: Ավելի թեժ, քան հայերն ակնկալում էին: Եթե Թուրքիան ընթանա ինքնամաքրման այս ճանապարհով, գուցե հերթը հասնի նաեւ Հայոց ցեղասպանության համար ներողություն խնդրելուն: Էրդողանը, գուցե ոչ դիտավորյալ, բացեց Պանդորայի արկղը: Տեսնենք, թե ինչ է դուրս գալու դրա միջից:

**Դետրոյթ, ԱՄՆ**
**Թարգմ. Հ. Ծ.**

ԱՄՆ-ԹՈՒՐՔԻԱ

## ԱՄՆ փոխնախագահ Բայդենը հորդորում է Թուրքիային...

*1-ին էջից*

Ջո Բայդենը Թուրքիա-Իսրայել հարաբերությունների բարելավման հույս է հայտնել, մտավորապես նույն լավատեսությամբ արտահայտվել է Կիպրոսի հիմնահարցի մասին, գոհունակություն է հայտնել Թուրքիայում ազգային փոքրամասնություններից առգրավված համայնքային կալվածքները վերադարձնելու Էրդողանի հրամանագրի առնչությամբ, ապա եւ անդրադարձել է Հայաստան-Թուրքիա հարաբերությունների նորմալացման հարցին:

Նա այդ հարցն արծարծել է նաեւ Մեջլիսի նախագահ Չիչեքի եւ Թուրքիայի Հանրապետության նախագահ Գյուլի հետ հանդիպումներում: Բայդենի այս արծարծումները արտահայտում են Հայաստան-Թուրքիա հարաբերությունների նորմալացման գործընթացի նկատմամբ պաշտոնական Վաշինգտոնի շահագրգռությունները: Ըստ երեւույթին, նորմալացման հարցը Թուրքիայի ղեկավարների, այդ թվում Էրդողանի հետ հանդիպմանը հենց այդ շահագրգռությունների ենթատեքստում է քննարկվել, որ Բայդենը հայ-թուրքական արձանագրությունները Մեջլիս վերադարձնելու առնչությամբ ողջունել է թուրքական կողմին եւ հույս է հայտնել, որ առաջիկա ամիսներին Թուրքիան արձանագրությունների առնչությամբ որոշակի քայլեր կկատարի:

Թե ինչպես կարձագանքի ԱՄՆ փոխնախագահին թուրքական կողմը, պարզ կդառնա առաջիկա ամիսներին: Բայց որ նա հույս հայտնելով թուրքական կողմին հորդորել է արձանագրությունների վավերացման ուղղությամբ քայլեր կատարել, ակնհայտ է: Ավելի քան ակնհայտ է, որ այդ քայլերը, եթե նպատակահարմար գտնի, թուրքական կողմը պետք է կատարի մինչեւ ապրիլի 24-ը:

Խնդիրը, սակայն, սոսկ թուրքական կողմին հորդորելը չէ, այլ Բայդենի այդ հորդորով Հայաստան-Թուրքիա հարաբերությունների նորմալացման գործընթացի ձախողման մեջ թուրքական կողմի պատասխանատվության ընդունումը Վաշինգտոնում: Այլ կերպ, եթե մեր իշխանությունները, հետեւելով քաղաքական որոշ ուժերի պահանջներին, հայ-թուրքական արձանագրություններից «հետ կանչեին» Հայաստանի ստորագրությունը, այսինքն՝ անվավեր ճանաչեին դա, ապա պաշտոնական Վաշինգտոնը հույս կհայտներ, որ առաջիկա ամիսներին արձանագրությունները Ազգային ժողով վերադարձի եւ դրանց վավերացման ուղղությամբ քայլեր կատարի Հայաստանը: Դա արդեն կստանար ոչ այնքան հորդորի, որքան պահանջի բնույթ:

Քանի որ արձանագրություններն անվավեր ճանաչելու դեպքում Հայաստանը հավասարապես կիսելու էր նորմալացման գործընթացը ձախողելու պատասխանատվությունը, ուստի նա ինքնաբերաբար թուրքական կողմին տալու էր Ջո Բայդենի հորդորներին հակադրվելու հնարավորություն: Այդ իսկ ընթացքում ստեղծվելու էին նախադրյալներ, որպեսզի շահագրգիռ միջազգային ուժերը հավասարության նշան դնեն գործընթացը նախապայմաններ առաջադրելու միջոցով ձախողող Թուրքիայի եւ թուրքական նախապայմանների պատճառով արձանագրությունների ընթացակարգը իրավացիորեն կասեցնող Հայաստանի միջեւ: Այսպիսով, Հայաստանը դառնալու էր միջազգային ճնշումների թիրախ:

# Ռուսաստանը կիսվեց

## «Սիրում ենք Ձեզ, բայց արդեն այլ կերպ»

Երբ երեկ ուշ երեկոյան ռուսական դաշնային առաջին ալիքը ժամը մեկ ընդհատում էր ցուցադրվող «Հանդիպման վայրը փոխել չի կարելի» սովետական ֆիլմը, արդեն իսկ պարզորոշ երեւում էր՝ Ռուսաստանում ոչ միայն հանդիպման, այլեւ քաղաքական իրադարձությունների ընթացքը փոխել «չի կարելի»: Պետական Դումայի՝ կիրակի անցկացված ընտրություններում իշխող «Եդինայա Ռոսիա» կուսակցությունը հաղթանակ տոնեց. ՌԴ Կենտրոնական ընտրական հանձնաժողովն արդեն իսկ հաշվառել է բոլոր ընտրական տեղամասերի արդյունքները, Դումա մտան բոլոր այն չորս կուսակցությունները՝ «Եդինայա Ռոսիան», Ռուսաստանի կոմունիստական կուսակցությունը, «Սպրավեդլիվայա Ռոսիան» եւ Ռուսաստանի լիբերալ-դեմոկրատները,

Մինչեւ վերջին պահը համառ պայքար էր ընթանում երրորդ տեղի համար՝ Միրոնովի գլխավորած՝ «Սպրավեդլիվայա Ռոսիայի» եւ Ժիրինովսկու լիբերալ-դեմոկրատների միջեւ: Նախքան ընտրությունները Ժիրինովսկին կանխատեսում էր, որ լիբերալ-դեմոկրատները կհավաքեն ձայների 20-30 տոկոսը, իսկ Միրոնովի կանխատեսումները ավելի համեստ էին, ու նաեւ իրատեսական. Միրոնովը իր կուսակցության համար կանխատեսում էր ընտրողների ձայների 14 տոկոսը, եւ «Սպրավեդլիվայա Ռոսիան» ի վերջո հավաքեց 13 տոկոսից քիչ ավելի ձայն՝ զբաղեցնելով երրորդ տեղը ու անցած ընտրությունների համեմատ կրկնապատկեց իր ներկայացուցիչների թիվը Դումայում: Լիբերալ-դեմոկրատները՝ 11 տոկոսից քիչ ավելի ձայներով, վերջին կուսակցությունն են, որը մտավ Դումա: Ժիրինովս-

թյունը, ապա եւ ոչ «Եդինայա Ռոսիայի» օգտին քվեարկածների թվի աճը նաեւ սրանով կարելի է պայմանավորել: Քանի որ շատ ընտրողներ ընտրել են, օրինակ «Սպրավեդլիվայա Ռոսիային», ոչ այնքան նրա համար, որ վերջինս ներկայացրել է սոցիալական լուրջ փաթեթ, այլ որովհետեւ դեմ են «Եդինայա Ռոսիային»: Ամենամեծ ընտրական ակտիվությունը գրանցվել է Չեչնիայում:

Ժիրինովսկու տվյալներով՝ ընտրություններին մասնակցել են հիմնականում երիտասարդները. «Ընտրողների միջին տարիքը, մեր տվյալներով եղել է 34-ը», հայտարարեց Ժիրինովսկին: Նշանակալի է, որ փաստորեն ՌԴ առավելապես երիտասարդ ազգաբնակչության շուրջ 20 տոկոսը սատարում է կոմունիստական գաղափարախոսությունը:

որոնք արդեն իսկ այնտեղ ներկայացված էին: Իսկ «Յաբլոկոն», «Պատրիոտի Ռոսիի» եւ «Պրավոյե դելո» կուսակցությունների համար գործեց օլիմպիական սկզբունքը՝ «կարեւորը մասնակցությունն է». հիշյալ կուսակցություններն այդպես էլ չկարողացան հաղթահարել 7 տոկոսի շեմը, որն անհրաժեշտ է Դումա մտնելու համար:

Ռուսաստանի այս ընտրություններն ուշագրավ մի շարք տարրեր ունեն: Մասնավորապես՝ Պուտինի նախագահությամբ գործող ու այս ընտրություններին որպես առաջին համարի՝ նախագահ Մեդվեդեւին ներկայացրած «Եդինայա Ռոսիան» չհավաքեց ձայների «50 տոկոս+մեկը», իսկ սա նշանակում է, որ 6-րդ գումարման Դումայում «Եդինայա Ռոսիան» ներկայացված չի լինի այնպես, ինչպես նախորդ Դումայում, այլ ավելի քիչ, ու ամենակարեւորը՝ «Եդինայա Ռոսիան» նոր Դումայում չի ունենա խորհրդարանական իշխող մեծամասնություն, այսինքն՝ չի կարողանա իրագործել սեփական օրենսդրական նախաձեռնությունները, եթե դա անելու համար չունենա մեկ այլ կուսակցության աջակցություն:

Վերջին տվյալներով՝ «Եդինայա Ռոսիան» հավաքեց ընդհանուր ձայների 49 տոկոսից քիչ ավելին, Դումայի նախորդ ընտրություններին «Եդինայա Ռոսիան» հավաքել էր ձայների շուրջ 60 տոկոսը՝ կազմելով խորհրդարանական բացահայտ մեծամասնություն: Ի տարբերություն նախորդ Դումայի, նորում ռուս կոմունիստները ոչ միայն գրավել են երկրորդ տեղը, այլեւ գրեթե կրկնապատկել են իրենց ներկայությունը: Զյուգանովի գլխավորությամբ կոմկուսը հավաքել է ընդհանուր ձայների շուրջ 20 տոկոսը, անցած ընտրություններին կոմունիստների արդյունքը՝ 11 տոկոս էր:



կին, չնայած կանխատեսում էր 20-30 տոկոս «լիբերալ-դեմոկրատական ձայներ», ամենեւին էլ չբողոքեց՝ «չնայած տեղ գտած մի շարք խախտումներին»: Փոխարենը ընտրությունների արդյունքները բողոքարկելու իր որոշումը հայտնեց Գրիգորի Յավլինսկին, որի գլխավորած «Յաբլոկո» կուսակցությունը հավաքեց քվեների 3 տոկոսից քիչ ավելին ու չհաղթահարեց 7 տոկոսի շեմը: Ընտրակեղծիքների առնչությամբ ՌԴ Բարձրագույն դատարան դիմելու համար փաստաթղթերի հավաքագրմամբ է զբաղված նաեւ կոմկուսը:

Եթե գումարենք նաեւ հանգամանքը, որ ընտրություններին մասնակցել է ընդհանուր ընտրողների միայն շուրջ 60 տոկոսը, ապա՝ ակնհայտ է՝ Ռուսաստանը կիսվեց: Նախ՝ ընտրողների ու չընտրողների միջեւ, ապա եւ՝ իշխանական կուրսը պաշտպանողների ու չպաշտպանողների միջեւ: Այս համատեքստում նկատենք, որ ընտրական թերթիկներից այս անգամ հանվել էր «բոլորին դեմ եմ» ցուցիչը, հետեւաբար՝ նախ ընտրություններին չմասնակցած 40 տոկոս ռուսաստանցիների առկայու-

Այդուհանդերձ ակնհայտ է, որ այս ընտրություններով ռուս ընտրողը հստակ ազդանշան տվեց վարչապետ Պուտինին՝ մասնավորապես գալիք նախագահական ընտրությունների կապակցությամբ. «Ձեր քաղաքականությունն ու բարեփոխումների ընթացքը այլեւս բացարձակ սատարում չունեն հասարակության կողմից»: Այս առումով ռուս սատիրիկներից մեկն անգամ նկատեց՝ «Սրանով ընտրողը կարծես ասաց Պուտինին՝ այո սիրում ենք Ձեզ, բայց արդեն այլ կերպ»:

Իսկ մի քանի տասնյակ միջազգային դիտորդները «սարսափելի ընտրական խախտումներ» դեռեւս չեն արձանագրել, ֆրանսիացի դիտորդներից մեկը անգամ նկատեց. «Այս ընտրությունները ռուսաստանցիների հաղթանակն են», այս կադրը, իհարկե, ռուսական դաշնային հեռուստաալիքները մի քանի անգամ ցուցադրեցին՝ որպես «միջազգային հեղինակավոր դիտորդի խոսք», չնայած տվյալներին, որ ընտրաթերթիկների լցոնումներ բազմիցս եղել են, նաեւ Մոսկվայում:

ՀՈՎԻԿ ԱՓՅԱՆ

ԴԵՊԻ ԿՐՈՆԱՊԵՏՈՒԹՅՈ՞ՒՆ

# Եգիպտոսի ընտրություններում հաղթել են իսլամիստները

## Սալաֆիներն օգտվում են Պարսից ծոցի երկրների նավթադոլարներից



Եգիպտոսի Կենտրոնական ընտրական հանձնաժողովը ընտրությունների 1-ին փուլի պաշտոնական արդյունքները չի հրապարակելու մինչեւ 2012-ի հունվարին կայանալիք քվեարկության ավարտը: Այդուհանդերձ խոշորագույն իսլամիստական շարժումների առաջնորդները արդեն հայտարարել են իրենց հաղթանակի մասին:

Երկրի լրատվամիջոցներում հրապարակված տեղեկությունները հաստատում են նրանց հայտարարությունները: Այդ տվյալների համաձայն՝ Ազատության եւ արդարության կուսակցությունը ներկայացնող «Մուսուլման եղբայրները» քվեարկության 1-ին փուլում ստացել է քվեների 40 տոկոսը, իսկ սալաֆիների Լույսի կուսակցությունը («Ան-Նուր») ստացել է 25 տոկոս: Այդ մասին հաղորդում է ՆՅՈՒԶռուԻսրայել կայքէջը:

Ամենաազդեցիկ աշխարհիկ կուսակցությունը՝ Եգիպտական դաշինքը, ստացել է մոտ 15 տոկոս: Մի քանի ազատական շարժումներ ստացել են քվեների մոտավորապես 5 տոկոսը: Իսլամիստների հակառակորդները նրանց հաջողությունը բացատրում են լավ կազմակերպվածությամբ եւ ընտրողների կաշառմամբ. ընտրությունների նախօրեին աղքատ շրջանների բնակիչներին պարեն էր բաժանվել:

Ի դեպ, արդեն քվեարկած 8 մլն ընտրողների մեծ մասը բնակվում է Կահիրեում եւ Ալեքսանդրիայում, այսինքն՝ Եգիպտոսի ամենից «արեւմտամետ» քաղաքներում: Քվեարկության հաջորդ 2 փուլերն անցկացվելու են գավառներում, իսկ դա նշանակում է, որ իսլամիստների հաջողությունը էլ ավելի նշանակալի կլինի:

Սալաֆիները հանդես են գալիս իսլամի նորմերի անշեղ կատարման օգտին եւ աչքի են ընկնում ռազմաշունչ մոլեռանդությամբ: Նախընտրական արշավի ժամանակ նրանք խոստացել էին երկրում հաստատել շարիաթի օրենքներ, որոնցից են՝ ոգելից խմիչքների արգելումը, գողության համար ձեռք կտրելը եւ անհավատարիմ կանանց քարկոծումը:

Եթե չափավորական իսլամիստների՝ «Մուսուլման եղբայրների» հաջողությունը սպասելի էր (նրանք այսօր երկրի առավել կազմակերպված քաղաքական ուժն են), ապա 2-րդ տեղում հայտնված սալաֆիների հաջողությունը անակնկալ դարձավ վերլուծաբանների մեծամասնության համար: Սալաֆիները իսլամիստ արմատականներ են եւ ուզում են Մուհամմեդ մարգարեի ուսմունքը վերադարձնել դրա «նախնական տեսքին»: Ընդմին սալաֆիների գաղափարախոսությունը չի հենվում եգիպտական ավանդույթների վրա. այն ներմուծված է Պարսից ծոցի երկրներից՝ Սաուդյան Արաբիայից, Քաթարից եւ մի շարք այլ միապետություններից: Հենց նավթային միապետություններն են ֆինանսավորում Եգիպտոսի արմատականներին, ինչը նրանց թույլ է տալիս բնակչությանը բաշխել սննդամթերք եւ դրանով իսկ ժողովրդականություն ձեռք բերել: Անցյալում նման «մարդասիրական ձեռնարկումներ» կատարում էին «Մուսուլման եղբայրները», բայց նրանք շռայլությամբ չեն կարող մրցակցել «Ան-Նուրի» հետ:

Իսլամիստների հաղթանակը եւ դրան նախորդած դեպքերը արդեն իսկ նվազեցրել են զբոսաշրջիկների հոսքը դեպի Եգիպտոս: Մասնավորապես ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ը հաղորդում է, որ Մոսկվայի «Դոմոդեդովո» օդանավակայանից 2010-ին դեպի Աֆրիկա կատարված փոխադրումները կազմել են ուղեւորափոխադրումների ընդհանուր ծավալի 32 տոկոսը, մինչդեռ 2011-ին այդ բաժինը կազմել է ընդամենը 19 տոկոս, կրճատվելով ավելի քան 1/3-ով: Զբոսաշրջային շատ ընկերություններ հունվարին էլ ավելի են կրճատելու դեպի Եգիպտոս կատարվող չվերթերը:

# Ըստ Ռոյթերի՝ «Համասը» հեռանում է Սիրիայից

**Դիվանագիտական եւ այլ աղբյուրներ վկայակոչելով՝ Ռոյթեր գործակալությունը հաղորդում է, թե պաղեստինյան «Համաս» արմատական կազմակերպությունը իր քաղաքական ղեկավարության կենտրոնակայանը Սիրիայի մայրաքաղաք Դամասկոսից տեղափոխում է Գազայի հատված:**

**Գործակալության տվյալներով՝ «Համասը» կամ «Իսլամական դիմադրության շարժումը» այս կապակցությամբ հայտարարություններ չի անում, սակայն «Համասի» ավելի ու ավելի մեծ թվով ակտիվիստներ եւ նրանց ընտանիքների անդամներ թողնում են անապահով դարձած Սիրիան եւ տեղափոխվում Գազայի հատված: Ռոյթերը հաղորդում է, որ «Համասի» տասնյակ առաջնորդներ իրենց ընտանիքներով արդեն փախել են Դամասկոսից:**

**Դատելով ստացված տեղեկություններից՝ Դամասկոսի արվարձան Յարմուկում գտնվող գաղթակայանում, որտեղ անցյալում ապրել են «Համասի» հարյուրավոր բարձրաստիճան ակտիվիստներ, մնացել է այդ շարժման ներկայացուցիչների աննշան մասը:**

**«Համասի» քաղբյուրոյի կենտրոնակայանի Գազա տեղափոխվելը, սակայն, այնքան էլ ճշմարտանման չէ, քանի որ Գազայի հատվածում այդ կազմակերպության առաջնորդները կգտնվեն Իսրայելի բանակի եւ հատուկ ծառայությունների մշտական նշանառության տակ: Վերջիններս կկարողանան հանգիստ գործել, չվախենալով միջազգային հակամարտություններից:**

**Այդուհանդերձ հավանական է, որ «Համասի» որոշ առաջնորդների ընտանիքներ ներկայիս Գազան առավել ապահով վայր են համարում, քան Դամասկոսը:**

**Ռոյթերի դիվանագիտական աղբյուրը հայտնել է, որ «Համասի» ղեկավարությունը հույս ունի Սիրիայում պահպանել սեփական ներկայացուցչությունը եւ հետագայում հարաբերություններ հաստատել երկրի «նոր իշխանությունների» հետ: Սակայն ներկա փուլում «Համասի» առաջնորդները նախընտրում են դուրս գալ Սիրիայից, որտեղ ամեն պահի կարող է սկսվել միջազգային գործողություն («Համասը» ՆԱՏՕ-ի երկրների մեծ մասում համարվում է ահաբեկչական կազմակերպություն):**

**«Համասի» ղեկավարությունը ներկայումս «բնակության մշտական վայր» գտնելու նպատակով բանակցում է տարբեր երկրների կառավարությունների հետ: Կազմակերպության առաջնորդներից շատերը պարզապես «բնակվում են օդանավերում»:**

ԱԶԳ

# Մշակույթ

# Հայաստանը հյուրընկալեց եվրոպային





ՖՈՏՈԼՈՒՐ

Այս տարի «Մանկական Եվրոտեսիլ» երգի մրցույթը տեղի ունեցավ 9-րդ անգամ, առաջին մրցույթը տեղի է ունեցել 2003 թ. նոյեմբերի 5-ին Դանիայում եւ միանգամից դարձել միջազգային հիթ, որից հետո անցկացվել է Նորվեգիայում, Բելգիայում, Ռումինիայում, Հոլանդիայում, Կիպրոսում, Ուկրաինայում եւ Բելառուսում, իսկ այս տարի՝ Հայաստանում:

Կ. Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում ավարտվեց «Մանկական Եվրոտեսիլ-2011»-ը, ամենաքաղցր խումբը՝ Վրաստանի «Քենդին» հաղթանակեց իր ակումբային երաժշտությամբ, հավաքելով 108 միավոր: Հաջորդը Նիդեռլանդներն էր 103 միավորով, 99 միավորով երրորդ տեղում հայտնվեցին Ռուսաստանը եւ Բելառուսը: Հայաստանը գրավեց հինգերորդ տեղը:

«Քենդի» խմբի 5 անդամներն են Աննա Խանչալյանը, Իրինան, Մարիամը, Գվանցան եւ Իրան: «Քենդի մյուզիք» երգի բառերի հեղինակը «Քենդի» խումբն է, երաժշտության հեղինակը՝ Գեորգի Կուխիանիձեն:

Մեր հայրենակցուհի **Աննա Խանչալյանն «Ազգի»** հետ զրույցում ասաց. «Շատ ուրախ եմ, որ մասնակցեցինք այս մրցույթին, հաղթեցինք Հայաստանում՝ իմ երկրորդ հայրենիքում: Վրաստանում ես արդեն հայտնի եմ եւ ինձ շատ են սիրում: Ստացվեց այնպես, որ ընտրության արդյունքում մենք դարձանք խումբ, այն էլ «շատ քաղցր»:

Մրցույթից հետո հաղթանակած խումբը հանդես եկավ մամլո ասուլիսով, որի ժամանակ «**Ազգի**» հարցին, թե ինչով է առանձնանում այս հաղթանակը իրենց մյուս հաղթանակից, «Քենդիի» ներկայացուցիչը պատասխանեց. «Սկզբում կցանկանայինք ասել, որ «Մանկական Եվրոտեսիլը» շատ առանձնահատուկ մրցույթ է, եւ մենք ցանկանում ենք, որ բոլոր երեխաները հասնեն նման հաջողությունների»:

Մրցույթի ավարտից հետո Եվրոպական հեռարձակողների միության համակարգող, «Մանկական Եվրոտեսիլ»-ի գլխավոր ղեկավար **Սիթսե Բեքերն** ասաց. «Սա մրցակցային համերգ է եւ այսպիսի համերգ կազմակերպելը մեծ նվեր է լրատվամիջոցների համար՝ շոուն ունեցավ 30 հեռարձակող: Հիասքանչ շոու էր կազմակերպված, հիացած ենք Հայաստանի Հանրային հեռուստաընկերության ստեղծագործական թիմով, եւ հաղթողն էլ արժանի էր հաղթանակին»:

«**Ազգի**» հետ զրույցում անդրադառնալով մեր մասնակցին՝ Դալիթային, հատուկ հյուրերից **Մոլլի Սանցեն** նշեց, որ Հայաստանի երգը ինքը լսել է ու իրեն դուր է եկել: Մրցույթն իրեն շատ հարազատ էր եւ կցանկանար հաղթողի դերում տեսնել Շվեդիայի մասնակցին: Նա բոլոր երկրների ներկայացուցիչներին հաջողություն մաղթեց:

Մինչեւ մրցույթը Մայր աթոռ Սուրբ Էջմիածնում մասնակիցներին ընդունել է **Գարեգին Բ Ամենայն հայոց կաթողիկոսը**:

Ողջունելով մասնակիցներին, Վեհափառ հայրապետն ասել է. «Վստահ ենք, որ բոլորդ էլ ուրախ ու խանդավառ եք: Համերգի ժամանակ տարբեր բարձունքներ պիտի նվաճեք: Ցանկանում եմ, որ ձեր մեջ ուրախությունն անպակաս լինի, անկախ նրանից, թե ինչ բարձունքի պիտի հասնեք, որովհետեւ արդեն իսկ բարձունք եք նվաճել՝ մասնակցելով այս մրցույթին», որից հետո Վեհափառը իր օրհնությունն է տվել պատանիներին:

Հանդիպման ավարտին նրանք այցելել են Մայր աթոռի թանգարան՝ ծանոթանալով հայ ժողովրդի ազգային-հոգեւոր արժեքներին:

Հայաստան այցելության շրջանակում, ինչպես տեղեկացնում է Երեւանի քաղաքապետարանի տեղեկատվության եւ հասարակության հետ կապերի վարչությունը, քաղաքապետ **Տարոն Մարգարյանը** հանդիպել է պատվիրակության անդամների հետ: Ողջունելով մասնակիցներին՝ քաղաքապետը կարեւորել է հանրաճանաչ միջազգային մրցույթը Երեւանում անցկացնելու փաստն ու ընդգծել, որ պատմամշակութային հազարամյա ավանդույթներ ունեցող մեր մայրաքաղաքն այսօր ապրում է ակտիվ մշակութային կյանքով եւ հավելել է. «Համոզված եմ, որ մրցութային ծրագիրը, որն ամեն տարի հիացնում է տարբեր երկրների քաղաքացիների, այս տարի եւս հաճույք եւ հիացմունք կպատճառի ամբողջ աշխարհին: Հաջողություն եմ մաղթում մեր բոլոր տաղանդավոր փոքրիկներին եւ հուսով եմ, որ Երեւանի ջերմությունը կտանեք ձեզ հետ ու անպայման կցանկանաք կրկին այցելել մեր քաղաք»: Տարոն Մարգարյանը մաղթել է նրանց նորանոր հաղթանակներ եւ հանձնել է մայրաքաղաքի զինանշան-խորհրդանիշը, իսկ պատվիրակության անդամները Երեւանի քաղաքապետին են փոխանցել ազգային հուշանվերներ:

«Մանկական Եվրոտեսիլի» առթիվ ստեղծվել է նամականիշ, որը 230-րդն է հայկական նամականիշերի պատմության մեջ, այն պատկերում է մրցույթի լոգոն: Նամականիշը թողարկվելու է 40.000 օրինակով: «Մանկական Եվրոտեսիլի պատմության մեջ այսպիսի իրադարձություն առաջին անգամ է տեղի ունենում, եւ ես շատ ուրախ եմ այդ առթիվ: Այս նվերը շատ թանկ եւ կարեւոր է ինձ համար», ասաց **Ջարմո Սիմը**:

«**Ազգը**» զրուցեց նաեւ Սինոփսիս Արմենիա ընկերության գլխավոր տնօրեն **Հովիկ Մուսայելյանի** հետ, որը իր մասնակցությունն է ունեցել նամականիշի ստեղծմանը. «Կապի նախարարությունում հանձնաժողով կա, որը տարին դեռ չսկսած հաստատում է հաջորդ տարվա պլանը, թե ինչ նամականիշեր են լինելու: «Մանկական Եվրոտեսիլի» նամականիշերը արտապլանային էին: Ամեն դեպքում մեր երկիրը փոքր է, եւ նման կարեւորագույն իրադարձության անցկացումը շատ կարեւոր է, եւ որոշեցինք նամականիշի միջոցով անդրադառնալ այս թեմային: Հետաքրքրական լուծումներով այս նամականիշերը, ըստ իս լավ են ստացվել եւ դրական արձագանքներ կլինեն»:

Մրցույթի համաեվրոպական քվեարկության ամբողջ հասույթը կտրամադրվի World Vision բարեգործական կազմակերպությանը, որը 1998 թ.-ից գործում է նաեւ Հայաստանում: Այս կազմակերպությունը ձեռնարկում է միջոցառումներ ի նպաստ երեխաների:

«Մանկական Եվրոտեսիլին» չէին մասնակցում Ադրբեջանը եւ նրա ավագ եղբայրը՝ Թուրքիան, որը հավակնում է Եվրոպական ընտանիքի անդամակցությանը, սակայն անգամ մանկական երգն է քաղաքականացնում: Ավելի վատ իրենց համար:

ՄԱՆԱՆԱ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

ՆՈՐ ՁԱՅՆԱՍԿԱՎԱՌԱԿ

# «Գյուրջիեւի վերադարձը հայրենիք»

**«Music of Georges I. Gurdjieff-Levon Eskenian»**

**«The Gurdjieff Folk Instruments Ensemble»**

**ECM Records 2236**

Հայազգի փիլիսոփա, երաժիշտ, պարուսույց, գրող Գ. Ի. Գյուրջիեւի երաժշտությունը ժողովրդական գործիքներով ներկայացնող այս ձայնասկավառակը թողարկվել է 2011 թվականի հուլիսին, ամբողջ աշխարհում մեծ հեղինակություն վայելող գերմանական ECM Records-ի կողմից:

Այս ընկերությունը աշխարհին է ներկայացրել այսօրվա մեծանուն երաժիշտներից շատերին, ինչպես օրինակ Արվո Պիարտը, Քեյթ Ջարեթթը, Գիդոն Կրեմերը, Չիկ Քորիեան, Տիգրան Մանսուրյանը, Քիմ Քաշքաշյանը եւ այլք:

Գյուրջիեւյան այս մեղեդիները՝ նրա Սան Թոմաս Դե Հարթմանի դաշնամուրի համար կատարած գրառումներից ժողովրդական գործիքների համար մշակել է Լեւոն Իսկենյանը: Ինչպես ինքն է ասում՝ «հաշվի է առնվել յուրաքանչյուր գործի էթնիկ պատկանելիությունը եւ դրան կապված ձայնային բնաշխարհը, երաժշտական լեզուն ու կատարման ավանդույթները, արվել է հնարավորն ազգագրական առումով ճշգրիտ մշակումներ կատարելու համար»: Արդյունքի մասին կոմպոզիտոր **Տիգրան Մանսուրյանն** ասում է. «Այս գործիքավորման մեջ ինձ գրավեց ծայրահեղ բծախնդիր, մաքուր վերաբերմունքը՝ առանց ավելորդ «խելոքությունների», «կոմպոզիտորությունների» ... ներկայացնելով ճշգրիտ այն Գյուրջիեւին, որն իր մեջ կրում է նաեւ Գյումրու միջավայրին, վարք ու բարքին, հոգեբանությանը բնորոշ տարրեր»:

Գյուրջիեւյան մեղեդիները նվագում է 2008 թ. Լեւոն Իսկենյանի կողմից հիմնված «Գյուրջիեւի անվան ժող. նվագարանների համույթը», որի կազմում նվագում են Հայաստանի մի շարք լավագույն երիտասարդ երաժիշտներ:

Ձայնասկավառակն արժանացել է ջերմ ընդունելության՝ ամբողջ աշխարհում, եւ միջազգային մամուլի հեղինակավոր անունների (ինչպես օրինակ BBC Music Magazine,The Guardian, The Financial Times, The Independent, USA National public Radio NPR Music, Mitteldeutsche Zeitung, LUnita,LA LIBERT,The Wire) խիստ դրական գնահատականին: Բրիտանական Songlines Magazine-ն այն ընդգրկել է աշխարհի 10 լավագույն CD ալբոմների շարքում, Ավստրալիայի պետական ռադիոն սեպտեմբերին այն ճանաչել է շաբաթվա լավագույն ալբոմ:

Գ. Ի. Գյուրջիեւը ծնունդով գյումրեցի է, Ավետիք Իսահակյանի, Մերկուրովի ժամանակակիցը: Նա 20-րդ դարի աշխարհում ամենահայտնի փիլիսոփաներից է: Առաջիններից էր, որը Արեւելքի մշակույթը ներկայացրեց Արեւմուտքին, ինչն էլ մեծ ազդեցություն թողեց Փիթեր Բրուքի, Քեյթ Ջարրեթի, Բեռնարդ Շոուի, Քեթրին Մենսֆիլդի նման մտավորականների վրա: Տարիների ընթացքում Գյուրջիեւի գաղափարները լայն ճանաչում են գտել աշխարհում շնորհիվ նրա ինստիտուտների, որոնք մինչեւ այսօր գոյություն ունեն աշխարհի գրեթե բոլոր երկրներում: Իսկ իր երաժշտությունն աշխարհին հայտնի դարձավ Թոմաս դե Հարթմանի կողմից գրառված դաշնամուրային վերարտադրմամբ:

Այս ծրագիրը Գյուրջիեւի ստեղծագործությունները վերադարձնում է իր ակունքներին: Իզուր չէ, որ մամուլի ներկայացուցիչներից շատերն այս նախագիծը բնորոշեցին հետեւյալ կերպ՝ «Գյուրջիեւի վերադարձը հայրենիք»:

Ստորեւ բերվում է մի քանի պատառիկ միջազգային մամուլի անդրադարձից.

«Գյուրջիեւը գրել եւ թելադրել է դաշնամուրային երաժշտության ծավալներ: Լեւոն Իսկենյանի «Գյուրջիեւ» ազգային նվագարանների համույթը մշակել ու վերականգնել է դրանք Փարիզի սալոններից եւ վերադարձրել դեպի իրենց արմատները՝ Կովկաս: Դրանք ներկայացնում են իրենց ծագումն ու հենց իրենց», David Honigmann, «Financial Times»



«Գործիքային ձայների համադրությունը եւ միաժամանակ միմյանցից այդքան տարբեր լինելը ստեղծում է խորը, խորհրդավոր ու սքանչելի հնչյուններ, որոնց հետ կարելի է ներամփոփվել», Phil Johnson, «The Independent»

«Խորազգաց հայկական երաժշտությունն օրորվող մի վալս է, որ սքանչելիորեն կվայելեր Հայաստանի մասին Ֆելինիի այդպես էլ չնկարահանված ֆիլմին», William Dart, The New Zealand Herald

# Մահացել է Կլարք Գեյբլի «գաղտնի» դուստրը

**Նոյեմբերի 25-ին Ֆիլադելֆիայի արվարձաններից Գիլեդուինում քաղցկեղից 76 տարեկանում մահացել է թատրոնի եւ հեռուստատեսության համեմատաբար քիչ հայտնի դերասանուհի Ջուդի Լուիսը, որը հետագայում Լոս Անջելեսում դարձել էր հոգեբույժ եւ նվիրել իր կյանքը հատկապես երեխաների իրավունքների պաշտպանությանը:**

**Ջուդիի ծնողների իսկությունը Հոլիվուդում ամենաերկար գաղտնի պահված պատմությունն է երեւի: Կենսաբանական հայրը եղել է «դերասանների արքա» հորջորջված, որպես բոլոր ժամանակների սիրելի դերասան ճանաչված իռլանդական եւ հոլանդական ծագումով Կլարք Գեյբլը, որի «Քամուց քշվածները» (1939 թ.) մասշտաբային ֆիլմում մարմնավորած Բատլերի կերպարը մինչեւ օրս էլ գլուխգործոց է համարվում: Իսկ մայրը դերասանուհի Լորետտա Յանգն է եղել, որը 30-ական թվականներին «Call of the Wild» ֆիլմում Գեյբլի հետ նկարահանվելիս՝ սիրահարվել է նրան, եւ իր խոսքերով «մեղավոր» հարաբերություն ունեցել նրա հետ: Կաթոլիկական կրոնի մոլի հետեւորդ լինելով, եւ որովհետեւ Կլարքն այդ ժամանակ արդեն ամուսնացած է եղել, նա թաքնուն է պահել հղիությունը եւ դուստր ծնվելուց հետո էլ (1935-ին) նրան որբանոցում է տեղավորել նախ, իսկ 2 տարի անց որդեգրել: Միայն 1994-ին Լուիսի հեղինակած «Անսովոր գիտելիք» կենսագրական գրքից է հանրությունը տեղեկացել իրականությանը:**

**Պետք է խոստովանել, որ հոր ու դուստր նմանությունն ակնհայտ է:**

Հ. Ծ.

# Վախթանգ Դարչինյանը զրկվեց չեմպիոնական գոտուց

### *2012-ին նա իր ուժերը կփորձի առանց կանոնների մարտերում*

Թեթեւագույնքաշային կարգում IBO-ի վարկածով աշխարհի չեմպիոն Վախթանգ Դարչինյանին չհաջողվեց մարզական իր կարիերայում չեմպիոնական 9-րդ գոտին նվաճել: Կալիֆոռնիայի նահանգի Անահայմ քաղաքում կայացած մենամարտում հայ բռնցքամարտիկը միավորներով (120-107, 117-110, 115-112) պարտվեց թեթեւագույնքաշային կարգում WBA-ի վարկածով աշխարհի ներկայիս չեմպիոն, պանամացի 26-ամյա բռնցքամարտիկ Անսելմո Մորենոյին, որը Վախթանգից խլեց IBO-ի վարկածով չեմպիոնական գոտին եւ դարձավ քաշային այդ կարգում աշխարհի բացարձակ չեմպիոն: Մորենոն արդեն 8-րդ անգամ հաջողությամբ պաշտպանեց WBA-ի վարկածով աշխարհի չեմպիոնի իր տիտղոսը, որ նվաճել էր 2008-ի մայիսին:



Բուքմեյքերների կարծիքով այդ մենամարտում հաղթողի հիմնական հավակնորդը Վախթանգ Դարչինյանն էր, որի հաղթանակի գործակիցը 2,5 էր: Առաջին իսկ ռաունդներից Վախթանգը ակտիվ գրոհներ սկսեց՝ փորձելով հնարավորինս շուտ նոկաուտի ենթարկել մրցակցին, թեեւ մենամարտից առաջ խոստացել էր չշտապել: Սակայն Մորենոն իրեն դրսեւորեց որպես հմտորեն պաշտպանվող բռնցքամարտիկ, որը հաջողությամբ խուսափում էր մրցակցի հուժկու հարվածներից: 4-րդ ռաունդում Դարչինյանից միավոր հանեցին այն բանի համար, որ նա հրելով գետին էր գցել մրցակցին: Մենամարտի 2-րդ մասում բացի պաշտպանվելուց, Մորենոն հասցնում էր նաեւ դիպուկ հարվածներ հասցնել Դարչինյանին, որը վերջին ռաունդներում արդեն բավականին հոգնել էր: Այս ամենի արդյունքում մրցավարները հաղթանակը շնորհեցին Մորենոյին:

Վախթանգ Դարչինյանը պրոֆեսիոնալ ռինգում 4-րդ պարտությունը կրեց: Հետաքրքրական է, որ այդ պարտության մեջ նա մեղադրել է մրցակցին. «Մորենոն ամեն կերպ խուսափում էր ինձ հետ ակտիվ պայքար մղելուց: Նա պատրաստվում էր մարտը շահել միավորներով, չէր ծրագրել նոկաուտի ենթարկել ինձ: Այդ ամենով նա փչացրեց մենամարտը, ուստի ես պարտվեցի»:

«Պատրաստվում էի խափանել Դարչինյանի ծրագրերը եւ հաղթել նրան: Ամբողջ մենամարտի ընթացքում գերազանցում էի մրցակցիս եւ կարողացա հասնել նպատակիս ու հաղթել նրան», հայտարարել է Անսելմո Մորենոն: Նա պրոֆեսիոնալ ռինգում անցկացրած 34 մենամարտերում իր 32-րդ հաղթանակը տոնեց:

Մենամարտի նախօրեին Վախթանգ Դարչինյանը հայտարարել էր, որ անկախ հանդիպման արդյունքից հաջորդ տարվանից իր ուժերն է փորձելու առանց կանոնների մարտերում: Տեսնենք, թե իր համար նոր մրցաձեւում ինչպես կդրսեւորի Վախթանգ Դարչինյանը, որը դեռեւս մտադիր չէ հրաժեշտ տալու ռինգին:

## Իսպանացիները Դեւիսի հնգակի գավաթակիրներ

Թենիսի Իսպանիայի հավաքականն իր պատմության մեջ 5-րդ անգամ նվաճեց Դեւիսի գավաթը: Վճռորոշ մրցախաղում իսպանացի թենիսիստները 3-1 հաշվով պարտության մատնեցին Արգենտինայի հավաքականին, որի կազմում զուգախաղում հանդես եկավ Դավիթ Նալբանդյանը:



Առաջինը կորտ դուրս եկան իսպանացի Ռաֆայել Նադալն ու արգենտինացի Խուան Մոնակոն: Բոլոր 3 խաղափուլերում էլ Նադալի առավելությունը զգալի էր (6-1, 6-1, 6-2): Նադալն առաջին միավորը պարգեւեց իսպանացիներին:

Ավելի համառ ու սկզբունքային մրցավեճ ծավալվեց իսպանացի Դավիթ Ֆեռերի եւ արգենտինացի Խուան Մարտին դել Պոտրոյի մրցախաղում: Հաղթողին որոշելու համար հարկ եղավ 5 խաղափուլ անցկացնել: Ի վերջո 3-2 հաշվով (6-2, 6-7, 3-6, 6-4, 6-3) մրցախաղը շահեց Ֆեռերը՝ 2-րդ միավորը պարգեւելով իսպանացիներին:

Արգենտինացիներն առաջին միավորը վաստակեցին զուգախաղում, երբ Դավիթ Նալբանդյանն ու Էդուարդո Շվանկը պարտության մատնեցին Ֆելիսիանո Լոպես-Ֆեռնանդո Վերդասկո զույգին (6-4, 6-2, 6-3): Հաշիվը դարձավ 2-1՝ հօգուտ իսպանացիների:

Մրցավեճի ելքը վճռվեց 4-րդ մրցախաղում, որում Ռաֆայել Նադալը համառ մրցապայքարում պարտության մատնեց Խուան Մարտին դել Պոտրոյին (1-6, 6-4, 6-1, 7-6): Այդ հաղթանակի շնորհիվ հաշիվը դարձավ 3-1 եւ այլեւս իմաստ չուներ անցկացնել Դավիթ Ֆեռերի ու Խուան Մոնակոյի մրցախաղը:

Իսպանացիների հաջողությունում մեծ ներդրում ունեցած Ռաֆայել Նադալը մրցաշարի ավարտից հետո հայտարարել է, որ մտադիր չէ հաջորդ տարի հանդես գալ Դեւիսի գավաթի խաղարկությունում, քանի որ ողջ ուշադրությունը կենտրոնացնելու է Լոնդոնի ամառային օլիմպիադայում ելույթների վրա: Նա նշել է, որ վերջին տարիներին մեծ ծանրաբեռնվածությամբ է խաղում: Նադալը հույս է հայտնել, որ Իսպանիայում կան երիտասարդ թենիսիստներ, ովքեր Դեւիսի գավաթի մրցաշարում կարող են իրեն հաջողությամբ փոխարինել: Ի դեպ, նրա թիմակիցներն էլ հավանաբար չմասնակցեն հաջորդ տարվա խաղարկությանը, քանի որ իրենք էլ ցանկություն ունեն հանդես գալու Լոնդոնի օլիմպիական խաղերում:

## Անելկան կմեկնի Չինաստան

**Լոնդոնի «Չելսիի» հարձակվող Նիկոլյա Անելկան ձմռան տրանսֆերային շրջանում հնարավոր է, որ տեղափոխվի Չինաստանի «Շանհայ Շենհուա» ակումբ: Եթե տեղափոխությունը կայանա, ապա 32-ամյա ֆրանսիացին կդառնա Չինաստանի առաջնությունում հանդես եկող 2-րդ հայտնի ֆուտբոլիստը: Ավելի վաղ չինական մեկ այլ ակումբ՝ «Գուանչժոուն» պայմանագիր էր կնքել արգենտինացի կիսապաշտպան Դարիո Դոնկայի հետ, որը Բրազիլիայում անցյալ տարվա լավագույն ֆուտբոլիստ է ճանաչվել: Նրան շատերը համեմատում են Լիոնել Մեսիի հետ: Դոնկան տարեկան 10,5 մլն դոլար աշխատավարձ է ստանում:**



## Վետերաններն ընդդեմ շախմատիստուհիների

**Չեխիայի Մարիանսկե Լազնե քաղաքում յուրօրինակ շախմատային մրցախաղ է ընթանում անվանի վետերաններից եւ երիտասարդ շախմատիստուհիներից կազմավորված թիմերի միջեւ: Թիմի յուրաքանչյուր անդամ սեւ եւ սպիտակ խաղաքարերով մրցելու է մյուս թիմի անդամների հետ:**

**Մեկնարկային տուրում գրանցվեց ոչ-ոքի: Վետերանների թիմում հանդես եկող Ռաֆայել Վահանյանը պարտվեց Մարիա Մուզիչուկին: Վետերաններից հաղթեց միայն Վլաստիմիլ Հորտը՝ պարտության մատնելով Եվա Կուլովանային: Ռոբերտ Հյուբներ-Նատալյա Պոգոնինա, Բորիս Գուլկո-Տանյա Սաչդեւա պարտիաներն ավարտվեցին ոչ-ոքի:**

**2-րդ տուրում շախմատիստուհիների «Ձնծաղիկներ» թիմը պարտվեց 1,5-2,5 հաշվով: Վետերաններին հաղթանակ պարգեւեց Ռոբերտ Հյուբները՝ առավելության հասնելով Տանյա Սաչդեւայի նկատմամբ: Պոգոնինա-Գուլկո, Կուլովանա-Վահանյան, Մուզիչուկ-Հորտ պարտիաներն ավարտվեցին ոչ-ոքի:**

**Այսպիսով, 2 տուրից հետո վետերանների թիմը հաղթում է 4,5-3,5 հաշվով: Անհատական պայքարում վետերանների թիմից լավագույն արդյունքն ունեն Ռոբերտ Հյուբներն ու Վլաստիմիլ Հորտը, շախմատիստուհիներից՝ Մարիա Մուզիչուկը, որոնք վաստակել են 1,5-ական միավոր: Ռաֆայել Վահանյանը 2 մրցախաղում կես միավոր է վաստակել: 3-րդ տուրում Վահանյանի մրցակցուհին կլինի Նատալյա Պոգոնինան:**

## Մխիթարյանը մրցանակակիր չդարձավ

**Սան Պաուլուում ավարտվեց շախմատի շրջանաձեւ մրցաշարը, որի 10 մասնակիցների թվում էր բրազիլահայ գրոսմայստեր Գրիգոր-Սեւակ Մխիթարյանը: Ավարտական՝ 9-րդ տուրում ոչ-ոքի խաղալով Անդրես Ռոդրիգեսի հետ, Մխիթարյանը 5 միավորով զբաղեցրեց 4-րդ տեղը:**

**Հաղթող ճանաչվեց արգենտինացի գրոսմայստեր Սանդրո Մարեկոն, որը վաստակեց 6,5 միավոր: 9-րդ տուրում նա հաղթեց Ֆեռնանդո Կուբասին: 5,5 միավորով 2-րդ տեղը գրավեց բրազիլացի Ժիլբերտո Միլոշը, որը հաշտություն կնքեց Ռոբերտո Մոլինայի հետ: Նույնպիսի արդյունքով 3-րդ տեղը գրավեց ուրուգվայցի Անդրես Ռոդրիգեսը:**

## Լեւոն Արոնյանն անհաջող է մեկնարկել




**Լեւոն Արոնյանն անհաջող է մեկնարկել Լոնդոնի շախմատի մրցաշարում՝ 2 տուրից հետո վաստակելով մեկ միավոր: Հայ գրոսմայստերը մեկնարկում հաշտություն կնքեց անգլիացի Լյուկ Մակշեյնի հետ, իսկ հաջորդ պարտիայում սեւերով պարտվեց ճապոնացի Հիկարու Նակամուրային: 3-րդ տուրում Արոնյանը սպիտակներով կխաղա անգլիացի Նայջըլ Շորթի հետ:**

**Հիշեցնենք, որ Լոնդոնի մրցաշարում հաղթանակի համար տրվում է 3, ոչ-ոքիի՝ 1 միավոր: 2 տուրից հետո առաջատարներն են Վլադիմիր Կրամնիկը, Մագնուս Կառլսենը եւ Հիկարու Նակամուրան, որոնք վաստակել են 4-ական միավոր:**

**Կրամնիկը ոչ-ոքի խաղաց Նակամուրայի հետ եւ հաղթեց Շորթին: Կառլսենը մեկնարկեց Հաուելի նկատմամբ տոնած հաղթանակով ու հաշտություն կնքեց Մակշեյնի հետ: 2-ական միավորով հաջորդ տեղերում են Մայքլ Ադամսն ու Լյուկ Մակշեյնը: Մեկական միավոր ունեն Լեւոն Արոնյանը, Վիշվանաթան Անանդը եւ Դեւիդ Հաուելը: Առայժմ առանց միավորի է ընթանում Նայջըլ Շորթը:**

## Հայ շախմատիստները միջին դիրքերում են

**Լվովում անցկացվող Միխայիլ Վասիլիշինի շախմատի հուշամրցաշարում Հայաստանը ներկայացնում են Վահե Բաղդասարյանն ու Տիգրան Ս. Պետրոսյանը: Վահեն մասնակցում է A խմբի (գրոսմայստերական) մրցաշարին, Տիգրանը հանդես է գալիս B խմբի (միջազգային վարպետների) մրցաշարում: Յուրաքանչյուր մրցաշարում հանդես են գալիս 10-ական շախմատիստներ:**

**A խմբում Վահե Բաղդասարյանը 6 տուրից հետո 3 միավորով ընթանում է 5-րդ տեղում: Նա մրցաշարը սկսեց Դանիել Սեմցեսենի նկատմամբ տարած հաղթանակով, ապա պարտություններ կրեց Ռոբերտ Ռիսից ու Վադիմ Տրեգուբովից: 4-րդ տուրում Վահեն հաղթեց Պետեր Մոլնարին, ապա հաշտություն կնքեց Յուրի Վովկի եւ Սերգեյ Չեխովի հետ:**

**A խմբում 5 միավորով առաջատարը Յուրի Վովկն է: Նրան մեկ միավոր է զիջում Անդրեյ Վովկը:**

**B խմբում հանդես եկող Տիգրան Պետրոսյանը եւս 3 միավոր ունի եւ ընթանում է 4-րդ տեղում: Տիգրանն անհաջող մեկնարկեց՝ կրելով 2 անընդմեջ պարտություն Ալեքսեյ Կոստինից ու Բեքյուլ Յիլդիզից: Հաջորդ 2 տուրերում Տիգրանը հաղթեց Նատալյա Բուկսային ու Իգոր Նեստերին: 5-րդ տուրում Տիգրանը պարտվեց Օլեգ Տեռլեցկուն, իսկ հաջորդ պարտիայում կրկին հաջող խաղաց ու հաղթեց Վլադիմիր Վետոշկոյին:**

**B խմբում երկիշխանություն է: 5,5-ական միավորով աղյուսակը գլխավորում են ռուսաստանցի Ալեքսեյ Կոստինն ու թուրք Բեքյուլ Յիլդիզը:**

## Կլիչկո-Մորմեկ մենամարտը հետաձգվել է

**Գերծանրքաշային կարգում WBA-ի, WBO-ի եւ IBF-ի վարկածներով աշխարհի ներկայիս չեմպիոն Վլադիմիր Կլիչկոյի եւ Ժան-Մարկ Մորմեկի միջեւ դեկտեմբերի 10-ին նախատեսված մենամարտը չի կայանա: Ավստրիայում մենամարտին նախապատրաստվող Կլիչկոն երիկամի նոպայով տեղափոխվել էր հիվանդանոց, որտեղ վիրահատվել էր: Նրա երիկամից հեռացրել էին քարը: Կլիչկոն առայժմ ցավեր ունի եւ չի կարող մարզումները վերսկսել:**

*Էջը պատրաստեց* ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

# Արմեն Այվազյանը դատվեց. դատարանը հիմնավոր համարեց Հայկ Դեմոյանի փաստարկները

Դեկտեմբերի 2-ին Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանում տեղի ունեցավ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի տնօրեն Հայկ Դեմոյանի դեմ Արմեն Այվազյանի քաղաքացիական հայցով դատական ակտի հրապարակումը:

Հիշեցնենք, որ հայցվոր Արմեն Այվազյանը մեղադրում էր Հայկ Դեմոյանին իրեն զրպարտելու եւ վիրավորելու համար՝ պահանջելով 3 մլն դրամ որպես փոխհատուցում: Պատասխանող Հ. Դեմոյանը, որը ներկա էր դատական նիստերին, ի տարբերություն հայցվոր Ա. Այվազյանի, իր հակափաստարկներում նշում էր, որ Ա. Այվազյանի անձի հետ կապված իր հայտարարություններն ու գնահատականները հնչեցվել են վերջինիս անպատասխանատու եւ վտանգավոր գործունեությանն ի պատասխան, այն է՝ թուրքական ապատեղեկատվությունը որպես հիմք ընդունելու եւ իր անձն ու Հայաստանի Հանրապետությունը վարկաբեկելու կրկնվող փորձերի համար: Ա. Այվազյանը բազմիցս ցուցաբերելով մտավորականին ոչ հարիր վարք՝ վերջին տարիների ընթացքում վիրավորական ու զրպարտչական բնույթի հայտարարություններ էր տարածել Հ. Դեմոյանի հասցեին:

Դատավոր Ռ. Ներսիսյանը, հրապարակելով դատական ակտը, մերժեց Ա. Այվազյանի հայցն ընդդեմ Հայկ Դեմոյանի՝ հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածի 1-ին կետը, որտեղ նշվում է, որ «զրպարտությունն անձի վերաբերյալ այնպիսի փաստացի տվյալներ հրապարակային ներկայացնելն է, որոնք չեն համապատասխանում իրականությանը եւ արատավորում են նրա պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը»: Համաձայն նույն հոդվածի 5-րդ կետի 3-րդ ենթակետի, «նախատեսված փաստացի տվյալները հրապարակային ներկայացնելը չի համարվում զրպարտություն, եթե բխում է զրպարտության ենթարկված անձի կամ նրա ներկայացուցչի հրապարակային ելույթից կամ պատասխանից կամ նրանից ելնող փաստաթղթից»:

Տվյալ պարագայում դատարանը գտել է, որ «հայցվոր Արմեն Այվազյանի կողմից միմյանց մեջ տեւական ժամանակ ընթացող հրապարակային վեճերի առանձին դրվագը չի կարող ընդհանուր համատեքստից դուրս գնահատվել, որպես հայցվորի պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը արատավորող վիրավորանք կամ զրպարտություն»:

Մերժելով Արմեն Այվազյանի հայցն ընդդեմ Հայկ Դեմոյանի՝ դատարանը վճռեց նաեւ Ա. Այվազյանից հօգուտ պետական բյուջեի բռնագանձել 60 հազ. ՀՀ դրամ, որպես չվճարված պետական տուրք:

Հ. Գ. Այս հոդվածը ներկայացնում ենք տպագրության նաեւ ի գիտություն լրագրող Գեւորգ Յազըճյանի, որը, թերեւս, լավ չտիրապետելով իրավիճակին եւ դատական ակտերի հրապարակման օրինական կարգին, շտապել էր հերթական անգամ ապատեղեկացնել ՀՀ եւ Սփյուռքի ընթերցողներին, թե իբր Ա. Այվազյանի հայցը մերժվել է առանց որեւէ հիմնավորման: Ցանկալի կլիներ, որ Գ. Յազըճյանը նախօրոք ընթերցեր դատարանի վճռի տեքստը, մանավանդ որ այդ փաստաթուղթը դատական ակտի հրապարակումից հետո անմիջապես հանձնվել է երկու՝ հայցվոր եւ պատասխանող կողմերին:

**ԼՈՒՍԻՆԵ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

*(կրճատումով)*

# 6 հայ մեղադրվում է Ադրբեջանի օգտին լրտեսություն կատարելու մեջ

*1-ին էջից*

Աշոտ Չթրկյանը Թուրքիա է մեկնել ընկերոջ՝ Կարեն Մեհրաբյանի առաջարկով: Այնտեղ ծանոթացել է Սայիդի եւ Տիգրանի հետ: Տեղեկանալով, որ ընկերը վարձատրության դիմաց աշխատում է նրանց համար եւ գաղտնի տվյալներ հավաքագրում, Չթրկյանը համաձայնել է օժանդակել Մեհրաբյանին:

Ամբաստանյալ Կարեն Պետրոսյանն էլ տեղյակ է եղել, որ նախկին գործընկեր Կարեն Մեհրաբյանը պետական սահմանի, Հայաստանի զինուժի բաշխման վերաբերյալ տեղեկություններ է հավաքագրում՝ հակառակորդ կողմին տրամադրելու նպատակով: Նրան մեղադրանք է առաջադրվել, որ գիտենալով նախկին գործընկերոջ դավաճանական ծրագրերի մասին, իրավապահ մարմիններին չի տեղեկացրել: Կարեն Մեհրաբյանը Արթուր եւ Դավիթ Ավետիքյանների հորաքրոջ աղջկա ամուսինն է: Նրանք նույնպես տեղյակ են եղել ազգականի գործունեության վերաբերյալ, սակայն իրավապահ մարմիններին չեն հայտնել:

Երեկ կայացած դատավարության ընթացքում Ռոմիկ Մաթեւոսյանի պաշտպան Սարգիս Ասլանյանը ներկայացրեց փաստաթուղթ, որ Մաթեւոսյանը 2 անգամ հայտնվել է հոգեբուժական կլինիկայում եւ առողջական խնդիրներ ունի: Կարեն Պետրոսյանի փաստաբան Հարություն Բաղդասարյանն էլ դատարանին միջնորդություն ներկայացրեց իր պաշտպանյալի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու վերաբերյալ: «Իմ պաշտպանյալը հույս է հայտնել, որ հանդիմանությունը հաշվի առնելով՝ Մեհրաբյանը ձեռնպահ կմնա որեւէ հանցավոր արարք կատարելուց»: Ըստ փաստաբանի՝ Պետրոսյանի արարքը չի կարելի հանցավորություն դիտել, քանի որ «չգիտեր Մեհրաբյանի գործողությունների մասին, նա տեղյակ էր միայն իրեն կատարված առաջարկությունների մասին, հետեւաբար չէր կարող չիմացածի մասին իրավապահ մարմիններին տեղեկատվություն հայտնել»:

Մինչդեռ մեղադրող կողմը՝ ՀՀ ԱԱԾ մարմիններում քննվող գործերով վարչության ավագ դատախազ Արամ Ամիրզադյանը շեշտեց՝ Պետրոսյանը տեղյակ էր Մեհրաբյանի հանցավոր գործողությունների մասին: Պաշտպանների միջնորդությանը՝ դադարեցնել տեւակցելու եւ հեռախոսազանգերի արգելանքը, դատախազը հիշեցրեց ամբաստանյալների կատարած հանցագործության նշանակությունը, կարեւոր համարեց արգելանքի կիրառումը: Արամ Ամիրզադյանի՝ մեղադրական եզրակացության ներկայացումը լսելուց հետո դատավորը հարց ուղղեց ամբաստանյալներին՝ «Դուք ձեզ մեղավոր համարո՞ւմ եք»: «Ոչ, չենք համարում», պատասխանեցին նրանք:

Ըստ սահմանված կարգի՝ դատարանը նախ պետք է լսեր գործով անցնող վկաներին: Առաջին վկան Աշոտ Չթրկյանի բարեկամ Աշոտ Ղեւոնդյանն էր, ում տանը Չթրկյանը համակարգչով կապ էր հաստատել հանցակիցների հետ: Սակայն Ղեւոնդյանը առողջական խնդիրներ ունենալու պատճառով լքել էր դատարանը: Ինչի հետեւանքով դատական նիստը հետաձգվեց մինչեւ դեկտեմբերի 13-ը:

ՀՀ ԱԱԾ մարմիններում քննվող գործերով վարչության ավագ դատախազ **Արամ Ամիրզադյանը** «**Ազգ**»-ի հետ զրույցում շեշտեց, որ պետական դավաճանության մեջ մեղադրվող 3 հայ երիտասարդների նկատմամբ առաջադրված մեղադրանքը հիմնավոր է: «Այստեղ մենք գործ ունենք պետական դավաճանության հետ, որը առավել մեծ նշանակություն ունի պետության անվտանգության համար: Ադրբեջանական հատուկ ծառայությունների համար Հայաստանը, մանավանդ Լեռնային Ղարաբաղի ինքնապաշտպանությունը, ԼՂ պաշտպանության բանակի գործունեությունը մեծ հետաքրքրություն են ներկայացնում», ասաց Ամիրզադյանը՝ հավելելով, որ եթե դատարանում հաստատվի Մեհրաբյանի, Չթրկյանի եւ Մաթեւոսյանի մեղքը՝ նրանց սպառնում է 10-15 տարվա ազատազրկում: «Պետական դավաճանության համար այս պատժաչափը քիչ է», ասաց դատախազը՝ ընդգծելով, որ պետական դավաճանության համար սա անկախ Հայաստանի պատմության մեջ 6-րդ գործն է:

**Հ. Գ. Դատավարության ընթացքում ամբաստանյալները պահանջեցին, որ իրենց չլուսանկարեն՝ անընդհատ կրկնելով, որ հայրենասեր են եւ պատրաստ են հայրենիքի սահմանի ամեն մի թիզի համար պայքարել:**



# «Նաիրի» կոնյակը՝ «Գրան Պրի»-ի մրցանակակիր

**Մոսկվայում 15-րդ հոբելյանական «Միջազգային գինու եւ թունդ ալկոհոլային խմիչքների» մասնագիտացված մրցույթում Երեւանի կոնյակի գործարանի «Արարատ» տեսականու 20 տարվա հնեցման «Նաիրի» կոնյակն արժանացել է ոսկե մեդալի եւ «Գրան Պրի» մրցանակի: Մրցույթն անցկացվում էր «Խաղողի եւ գինու միջազգային կազմակերպության» (International Organisation of Vine and Wine) հովանավորությամբ: Այս տարի մրցույթին մասնակցել է 115 անուն թունդ ալկոհոլային խմիչք՝ մասնակցությամբ 15 երկրի՝ Պորտուգալիա, Իսպանիա, Ռուսաստան, ԱՄՆ, Ուկրաինա, Ֆրանսիա եւ այլն:**




**Շեշտենք, որ 15-րդ հոբելյանական «Միջազգային գինու եւ թունդ ալկոհոլային խմիչքների» մրցույթի արդյունքներով «Արարատ»-ը հաղթող է ճանաչվել «Տարվա լավագույն ապրանքանիշ» անվանակարգում:**

**Երեւանի կոնյակի գործարանից հիշեցնում են, որ սա «Նաիրի» կոնյակի արդեն երկրորդ մրցանակն է: Փետրվարին Մոլդովայում կայացած «Գինու եւ ալկոհոլային խմիչքների» միջազգային մրցույթում կոնյակն արժանացել է ոսկե մեդալի: «Արարատ» տեսականու «Նաիրի» կոնյակը արտադրվում է 1967-ից: Այս ընթացքում «Նաիրի» կոնյակն արժանացել է 29 ոսկե եւ մեկ արծաթե մեդալի:**

# Օրենքի ընդունումից հետո թիկնապահներին խորհրդական կձեւակերպե՞ն

**Ազգային ժողովի երեկվա նիստում պատգամավորները շարունակեցին քննարկել «Մասնավոր պահնորդական ծառայության մասին» օրինագիծը, որը մեկ այլ օրենքում փոփոխություններով կանոնակարգում է թիկնապահական գործունեությունը՝ մեկ անձին սպասարկող թիկնապահների նվազագույն թիվ (3) եւ փոխադրամիջոց (1 մեքենա) սահմանելով, ինչպես նաեւ բազմաթիվ այլ կանոնակարգումներով («Ազգն» այդ մասին գրել է): Երեկ իր պատկերավոր ելույթում անկախ պատգամավոր Վիկտոր Դալլաքյանը կասկածի տակ դրեց թիկնապահների նվազագույն թվի սահմանումը կյանքում գործելու հավանականությունը, քանի որ թիկնապահ պահողները հիմա էլ նրանց կսկսեն ձեւակերպել որպես «խորհրդականի» կամ «օգնականի»: Այսինքն, նա, ով թիկնապահ է վարձել, մտավոր բարձր կարողությունների տեր անձնավորություն է եւ խորիմաստ մտքեր է արտահայտում, իսկ սափրագլուխ «ախպերները» պետք է նրան օգնեն այդ բարդ գործում», իր սպանիչ հումորը գործի դրեց Դալլաքյանը: Նա նշեց, որ Հայաստանում թիկնապահ վարձում են ոչ թե պաշտպանության համար, այլ այն պատճառով, որ դա «պրիստիժի» բաղադրիչ է դիտվում, ինչպես գնված պատգամավորական մանդատը կամ ակադեմիկոսի կոչումը: Բացի դրանից՝ թիկնապահները կիրառվում են որպես ուժային ազդեցության եւ սպառնալիքների տարր ընտրությունների շրջանում: Նա բերեց այժմ առկա արժեքային համակարգի «գագաթնակետ»-օրինակը՝ առաջ երեխաներն ուզում էին ուսուցիչ ու տիեզերագնաց դառնալ, այժմ՝ իդեալը քարացած հայացքով սափրագլուխն է:** **Ս. Խ.**

# Կեցցե՞ մարդասպանը

*1-ին էջից*

**Բայց այս դեպքում, երբ Ռամիլ Սաֆարովին Ադրբեջանում համարում են «խղճի կալանավոր» եւ «անարդարության զոհ», գրեթե բացառված է, որ նա հայրենիքում շարունակի կրել ցմահ բանտարկության պատիժը: Ավելի քան ակնհայտ է, որ էքստրադիցիան, եթե տեղի ունենա, հավասարազոր կլինի Ռամիլ Սաֆարովի «արդարացմանը»:**

**Այս պարագայում, անշուշտ, հայ հասարակության եւ իշխանությունների խնդիրն է ամեն ինչ անել, որ Ադրբեջանի կանխամտածված գործարքը չկայանա: Իսկ հունգարական կողմն էլ պարտավոր է հաշվի առնել իր հնարավոր քայլի հետեւանքները: Այն, որ դրանով մեծ հարված կհասցվի ղարաբաղյան կարգավորմանն ուղղված միջնորդական ջանքերին: Քանի որ ի՞նչ հավաս կարող է ունենալ հայկական կողմը միջնորդների հավաստիացումների հանդեպ, եթե եվրոպական մի երկիր, տուրք տալով տնտեսական կոնյունկտուրային, հանկարծ որոշի բավարարել Ադրբեջանի «ազգային արժանապատվության» հայցը: Չի կարելի ասել. «Կեցցե մարդասպանը»: Մարդասպանին պիտի միայն նզովել:**

## Հայտարարություն

Սույն թվականի դեկտեմբերի 12-ին, ժամը 12:00–ին տեղի կունենա ՀՀ Արմավիրի մարզի Էջմիածին քաղաքի Չոբանքարայի համայնքում նախատեսվող քրեակատարողական շենքային համալիրի աշխատանքային նախագծերի շրջակա միջավայրի վրա ազդեցության վերաբերյալ հասարակական լսումներ: Նախագծային փաստաթղթերին կարելի է ծանոթանալ ք.Երևան Կոմիտաս 29 հասցեում: Հեռ. 22-14-85, 220218.

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 5.12.2011, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Նոյեան Տապան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: